

բուց Ս. Գեորգեա կուրի: Որ էր կոյր ի ծնէ յԱրնէս քաղաքէ եւ մի ոմն ընկեր եւ յառաջնորդ նորին Գրիգոր անուն...: ԹՊ. 458բ¹. ԱՆԿԻ ԻԸ: Մայիս Ե: ՎԿ. Տիմոնի Առաքելոյն. եւ Իրենեայ կուսին: ԹՊ. 460ա². ԱՆԿԻ ԻԹ: Մայիս Զ: ՅԻԶ. Յորայ արդարոյն եւ երանելոյն: ԹՊ. 461բ¹. ԱՆԿԻ Լ: Մայիս Է: Տօն է Երեւման Ս. Խաչին յերուսաղէմ: Յայտմ. յԻԶ. է ողորմութեանն Աստուծոյ:

(Շարունակելի:)

Ն. ԳԱՍՏԱՊԵԱՆ

ՄԱՂԱՐԿՈՅ ՆԱԽԱՊԱՐԿՈՅ ԳՆՆՔԻՆ ԿՈՆԿԱՆԵՐԸ

(Շարունակութիւն:)

Ժ.

ԿՈՆԿԱՆ ՄԻԲԱՅԷԼ Ա. ՍԵՐԱՍՏԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (1563(4)—1570)

Ստեփանոս Ե. Կաթ. Սարմատեցիին յաջորդն է Միքայէլ Ա. Սերաստացիին, որ Ստեփանոս Զուղայեցիին վկայութեան համեմատ ՌԶ թուականին, այս է 1557ին Նախավկայի կոնդակ մը կը գրէ՝ «Ի տէր Միքայէլի ՌԶ»: Այս պարագային հարկ պիտի ըլլար խորհելու որ՝ Միքայէլ զայն գրած ըլլար աթոռակից կաթողիկոս եղած ատեն: Սակայն անոր բովանդակութեանն ու գրութեան հեղինակարար արտայայտութիւնը այդ վարկածը կը մերժեն: Արդէն անոր մէջ յիշատակուած թուականն ամէն տարակոյս կը բառնայ: «Գրեցաւ Գիր օրհնութեան բարձր հրամանի սրբոյ աթոռոյս էջմիածնի ի թուականութեանն Հայոց ՌԺԲ (1563) ամի» (հմմտ. վարը եւ Շահխաթունեան, Մտորագրութիւն, Ա., էջ 53): Ուտի Ստեփանոսի թուականը պէտք է սրբադրել եւ կամ մտածել թէ այդ թուականին (1557ին) Միքայէլ ուրիշ կոնդակ մըն ալ գրած ըլլայ: Այդպէս խորհելու պատճառ մը չունինք առ այժմ:

Զունինք Միքայէլի այս կոնդակին ՆկարՊԳՐՈՒԹԻՒՆԸ, բայց ունինք անոր ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ՝

Անուամբ անեղին Աստուծոյ Հօր եւ ի փառս ծնեցելոյն ի նմանէ անեղապէս Որդոյն Միածնի եւ ի գովեստ Բղիսեցելոյն ի նմանէ Հոգւոյն ճշմարտի: Այս մեր հոգեւորական

բարձր հրամանի հաստատութիւն է եւ օրհնութիւն: Ի Միքայէլ ծառայից ծառայիցն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյն մերոյ Տեառն: Շնորհօք եւ ողորմութեամբ նորին կաթողիկոս ամենայն ընդհանուր Հայաստանեայց եւ եպիսկոպոսապետ Մեծաց Հայոց եւ Պատրիարք արեւելեան Վաղարշապատու, անդապահ եւ յաջորդ աթոռակալ եւ փոխանորդ սրբոց առաքելոցն Բարդուղիմէոսի եւ Թաթէոսի եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին: Զոր գրեմք ի գրանէ աստուածազեր աթոռոյ եւ լուսակիր տաճարէ աստուածաչէն կաթողիկէ սուրբ էջմիածնի եւ ի բաղմահաւաք սրբութեանցն: Նախ աստուածամուկս սուրբ Գեղարդէ ներկեալ արեամբն Յիսուսի Քրիստոսի: Եւ ի թաղն արքայական ի փշոց պսակէ եղեալ ի գլուխն Յիսուսի, եւ ի սեւեռեալ բեւեռաց բաղկացն Յիսուսի: Եւ ի ծածկոյթ յերեսացն Յիսուսի ի սուրբ վարչամակէն: Եւ ի տէրունական աստուածընկալ սուրբ նշանացս: Եւ ի շնորհարաշխ Աջոյս մեր սուրբ Լուսաւորչին Գրիգորի: Եւ ի սուրբ կուսանաց գերեզմանացս Հովիտիմեանց եւ Գայիանեանց: Եւ այլ սրբութեանցս աստուածազարդ սուրբ Աթոռոյս էջմիածնի: Զոր եւ առաքեմք նախ ի Նախավկայի վանքն եւ յիւր սեպհական թէմն. նախ յամէնօրհնեալ եւ աստուածապահ յանուանի եւ յակնաւոր մայրաքաղաքն ի Խոյ, որ է Զարեանդ գաւառ եւ յամենայն վիճակն իւր բոլորովին: Ի Ղարաղաղէն, որ բաժանի Առաքելոց յերկրէն եւ զնայ մինչեւ ի Ղարաթափայն եւ բաժանի ի Սարմատայ, յերասխայ մինչեւ ի Մարանդայ գրիւէն: Ի Շիրինթալն իւր յերկրոյն: Ի յաստուածախնամ գիւղաքաղաքն Զուղայ եւ իւր վանքն: ՅԱստապատ եւ իւր վանքն: Ի Մեծ քաղաքն Նախչուան: Եւ ի Շամբի ձորն բոլորովին: Յորոց այդոցիկ բնակչացդ ի միասին: Պատուելի քահանայիցդ, սրբասէր կրօնաւորացդ, աստուածասէր ձեռագործացդ, բարեպաշտ տանուտերացդ, իմաստուն վաճառականացդ, ձեռնահմուտ արհեստաւորացդ, աշխատասէր հողագործացդ, եւ ամենայն չափու հասակի մեծի եւ փոքու, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, երիտասարդաց եւ կուսից եւ ամենայն չափու հոգեւոր գաւակաց բաղմաշարչար նահատակին սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, որով անուանք ձեր գրեալ են ի գրին եւ գրին կենաց յանձնաց յիշատակութիւն Աստուծոյ:

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն հոգեւոր որդիք մեր ի Քրիստոս, զի որպէս օրէն է աստուածային եւ սահման մահկանացու բնութեանս, ամենայն որդի հարազատ ժառանգել գտունն եւ զհայրենիս հարց իւրեանց: Այսպէս եւ այսու օրինակաւ եկն առ մեզ ի յազմանէ Հոգւոյն սրբոյ ընտրեալը Աստուծոյ եւ ի մարդկանէ հեղահոյի բարեմիտ եւ սրբասէր կուսակրօն արքեպիսկոպոսդ (Գ)տէր Մատթէոս, որ է սնեալ եւ վարժեալ ի սուրբ Նախավկայի վանքն եւ ուսեալ էր զբանս իմաստասիրական եւ աղօթս առնէր խոնարհութեամբ, ուսեալ էր զվարս առաքինութեամբ, որ եկն ի յաթոռս ձեր ամենայն միաբանից վկայութեամբն, մանաւանդ բոլորեցունց ձեր թեմովդ քահանայից եւ ժողովրդոց վկայած. նաեւ Աստուծոյ իսկ: Իսկ մեք որպէս խնամածու եւ գթած հայր ի վերայ սիրելի որդւոյ իւրոց պատշաճ եւ իրաւունք համարեցաք լինել զտէր Մատթէոս արհեսպիսկոպոս սուրբ ուխտին Նախավկայի, եւ իւր սեպհական վիճակին եւ ոչ զայլ ոք օտար, զի օտարն վարձկան է եւ ոչ է ճշմարիտ հովիւ: Վասն որոյ կոչեցաք զդա ի կարգ եւ յաստիճան արհեսպիսկոպոսութեան խորհրդով ձեռնադրութեամբ աստուածային իշխանութեամբն զտէր Մատթէոս արհեսպիսկոպոս աստուածամուկս Գեղարդեամբս եւ աստուածախօս սուրբ Աւետարանաւս եւ շնորհաբաշխ սուրբ Աջովս մեր սուրբ Լուսաւորչին Գրիգորի ի մէջ յերկնաման սուրբ տաճարիս էջմիածնի: Եւ պարգեցաք զմա զյակնաւոր սուրբ ուխտն Նախավկային բոլորովին բնական եւ սահմանեալ իւր վիճակաւն, զոր վերոյգրեցաք զմա թեմ, աթոռ եւ հանդատեան տեղի: Վասն որոյ եւ առաջնորդութեամբ Միածնի Որդւոյն Աստուծոյ առաքեցաք սրբազան զտէր Մա(տ)թէոս արհեսպիսկոպոս առ ձեզ մերով առաքելական եւ հայրապետական իշխանութեամբ հովուել զձեզ եւ ուսուցանել՝ զնալ յօրէնս Տեառն անարատութեամբ եւ ի պատուիրանս սրբութեամբ, տալով զանձն իւր օրինակ բարեաց ամենեցուն: Մանաւանդ պահեցէ զանձն իւր սրբութեամբ, արդարութեամբ եւ խոնարհութեամբ, առնելով ինքն եւ ապա ուսուցանելով ձեզ, պահելով զանձն իւր անբանբաս առ մարդիկը եւ անդատապարտ առ Աստուած: Եւ ի վերայ այսք ամենայնի լիցի այցելու եւ հայր որբոց եւ այրեաց. տնանկաց եւ աղքատաց եւ լիցի ամենեցուն հոգւով եւ մարմնով ցաւակից եւ վշտա-

կից սիրով Քրիստոսի: Կոչեացէ զիմաստունսն եւ զարժանաւորսն եւ վկայեալսն ի կարգ եւ յաստիճան կիսասարկաւազութեան եւ քահանայութեան, կալցի եւ հրամանաւ մերով ի վերայ ձեր առաքելաբար իշխանութիւն կապելոյ եւ արձակելոյ: Այլ եւ զամենայն կանոնեալ հաս եւ զիրաւունս ձեր զոր յամենայն տարի պարտիք տալ Աթոռոյ բաժին տուք ի սուրբ Նախավկայի վանքն ի ձեր հոգւոյ տունն: Եթէ զինչ է հաս եւ իրաւունք, այս է հասն եւ իրաւունքն. զինչ էրէց որ ի թեմս կայ, նոցա տանէն զինչ հասք որ լինի մուտքն Նախավկային է, Տէրունական մատաղն որ լինի երին եւ մորթին իւր Աթոռոյն է, յանկարծամահ որ լինի քառասնիցն ու մատաղն եպիսկոպոսին է եւ կողոպուտն լաւ խալին մի կամ լաւ շուրջառ տան յԱթոռն: Զերախայրիս կալոց եւ զհնձանաց. երախայրիքն այն է յիշնաղլուխ կէս մարզան հաց. ամէն հնձանէ մէկ զորակ զինի: Զսրբանուէր, որ է սրբոց գրամ, այդ եկեղեցւոյ եւ ի յաշի լուսազին է: Այս ամենայն աշխարհ, յոր տեղ որ քրիստոնէութիւն կայ զայդ կու տան իւրեանց Աթոռոյն: Եւ առաւել զսրբանուէրն որ եկեղեցւոյ եւ խաշի լուսազին է, որ ի շատէն շատ եւ ի քիչէն քիչ, որպէս ասէ Աւետարանն թէ՛ որում շատ տուաւ շատ խնդրեցի ի նմանէ. եւ որում սակաւ. որ ամէն տարի մի անգամ սրբազրամ ժողովին, որ սրբոցն է բաժին: Եւ այլ ինչ հարկաւոր հարկ որ լինի, առանց Աթոռոյ հրամանան չունիք իշխանութիւն կատարել թէ մատաղ է թէ խաչ օրհնեացք, թէ այլ ինչ որ պատեհն է սուրբ Աթոռոյն, որպէս յամենայն տեղի:

Այս է հաս եւ իրաւունք Աթոռոյն բաժին, զոր ասացի զամենայն: Եւ մի ոք իշխեսցէ հակառակիլ զմա եւ կամ խորիցէ իրաւանց զորա եւ կամ չի հնազանդի զմա եւ հակառակ լինի հրամանաց մերոց եւ կաթողիկոսարանիս կամ այլազգիք անկանին եւ ոյժ հասուցանեն սրբոյ Աթոռոյն այնպիսիքն եղիցին ի ներքոյ պատժոց եւ զատապարտութեան: Զպատիժն Կայենի սոցեն, զմասն Յուդայի եւ զՄաշհանուացն սոցեն: Ամէն: Իսկ հնազանդեալքն զորա եւ հրամանի սրբոյ Աթոռոյս օրհնեալ լիցին յԱստուծոյ եւ ամենայն սրբոց եւ ի մէջն: Ամէն:

Եւ զուր սպասաւորք սուրբ Նախավկայիդ մեծ եւ փոքր միաբանք սուրբ ուխտիդ սիրով ընկալարուք զտէր Մա(տ)թէոս եպիսկոպոսդ

արհի ձեզ առաջնորդ, որպէս արժանաժա-
ռանք այդմ Աթոռի եւ դահի: Ծնորհեցար ի
ձեռն դորա ձեզ պատուական պարզեւզ
զիւղն սուրբ օծութեան, զսրբալոյս մեռունն,
զոր Հոգին սուրբ արասցէ ի լուսաւորութիւն
նորածնելոցն աւազանան. յորդէզրութիւնն
Հօրն երկնաւորի եւ ի ժառանգակցութիւն
Քրիստոսի: Զնոյն ի ճակատն նշան հաստա-
տութեան եւ յօծումն քահանայից եւ ի նորո-
գութիւնն սրբոյ Եկեղեցւոյ: Բայց յամենայն
ամի նոր առցէ եւ զհինն ի նոյն խառնեացէ ի
փառս Քրիստոսի Աստուծոյ, որ է օրհնեալ
յաւիտեանս ամէն:

Գրեցաւ զիւր օրհնութեան բարձր հրա-
մանի մեծի սուրբ աթոռոյս էջմիածնի ի
թուականութեանս Հայոց մեծայ ՌԺԲ. ամի:
Եւս առաւել հաստատութեան ձեռնադրեցար
մերով սովորական կարմիր ձեռնադրաւս ի
փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Ի Տէր
Միքայէլ ծառայ ծառայիցն Յիսուսի Քրիս-
տոսի, շնորհօք եւ ողորմութեամբ նորին կա-
թողիկոս ամենայն Հայոց եւ Պատրիարք Վա-
ղարշապատու սուրբ էջմիածնի աստուածա-
զիւր սուրբ Աթոռոյս: Գրեցաւ զիւրս ի սուրբ
Աթոռս էջմիածին: (Ակիւնեան Հ. Ն., Հա-
ւաք. Յիշատ. Երեւան, 683, Հաւաքածոյ կոն-
զակաց, 1736 թուին արտադրուած:)

ԺԱ.

ԿՈՆՎԱԿ ԵՂԻՇԷ Բ. ԱԹՈՌԱԿԻՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
(1504—1506)

Միքայէլ Սերաստացիէն յառաջ աթոռա-
կից կաթողիկոս եղած է Եղիշէ Բ., որ Ստե-
փանոս Զուղայեցիին զրութեան համեմատ
կոնդակ մը զրած է Նախավկայի վանքին հա-
մար: Բարբրաստօրէն թէ տարեթեւը ու թէ
կաթողիկոսին անունը կը համաձայնին եւ
զժուարութիւն մը չի ծագիր: Եղիշէի այս
կոնդակը ծանօթ է Ծախաթունեանին, որ կը
գրէ թէ՛ այն զրուած է ԶԾԳ. ԻԳ Նաւա-
սարդի եւ Միքայէլի կոնդակին հետ կը զըտ-
նուի Նախավկայի վանքին մէջ (Ստորագրու-
թիւն, Ա., էջ 53—54):

Անծանօթ կը մնանք այս կոնդակին
ՆԿԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ
Եւ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

ԺԲ.

ԿՈՆՎԱԿ ՍՏԵՓԱՆՈՍ Ե. ՍԱԼՄԱՍՏԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
(1542—1564)

Այս կաթողիկոսի անունովը Ստեփանոս
միաբան Զուղայեցի կը յիշէ կոնդակ մը՝
«Ի տէր Ստեփաննոսէ ԶԳԴ» (1545) (հմտ.
վերը):

Զունինք պատճառ մը այսպիսի կոնդակ
մը զլանալու այս անուանի կաթողիկոսին,
քանի որ թէ թուականը եւ թէ անունը կը
համաձայնին, թէեւ կոնդակին մասին ուրիշ
տեղէ ծանօթութիւն չունինք եւ չենք գիտեր
անոր՝

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ու
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

ԺԳ.

ԿՈՆՎԱԿ ՄԵԼՔԻՍԵԿԵ ԳԱՌՆԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
(1593—1599, 1600—1624)

Մելքիսեզ կաթողիկոսն առանձին զրած
է Նախավկայի վանքին համար կոնդակ մը
եւ այն Ստեփանոս միաբանի համաձայն՝ ՌԿԲ
թուականին, իսկ Բնադրին համեմատ՝ ՌԿԳ.
ամին: — Խեղճ կոնդակ մըն է:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ
Նիւթ՝ թուղթ, ողորկ, բարակ: — Մե-
ծուքիւն՝ 49 × 21: — Գրութիւն՝ 43 × 18:
— Տող՝ 67 + 2 = 69: — Գիր՝ նօտրադիր,
փօքր: — Զարգագիրք՝ պարզ, առաջին եւ
չորրորդ տողերը կարմիր: — Լուսանցա-
գարդֆ չունի, ինչպէս եւ Նկարք: — Կնիք՝
երկու հատ, պղտիկին վրայ կայ՝ «Տէր Մել-
քիսէթ կաթողիկոս ամենայն Հայոց», մեծին
վրայ՝ «Տէր Մելքիսէթ կաթողիկոս ամենայն
Հայոց եւ Պատրիարք Վաղարշապատի սուրբ
Աթոռոյ, Յիսուս Քրիստոս» եւ Փրկչին պատ-
կերը: — Հանգամանք՝ քիչ մը փխտուած:
— Ծանօթութիւն՝ կոնդակին վրայ զրուած՝
«Կոնդակ Մելքիսէթ կաթողիկոսի, որով հաս-
տատէ զՆախավկայի թէման եւ զիրաւունան
նոցին տալ անխափան: Առաջնորդն Պետ-
րոս եպիսկոպոս ի թղ. Հայոց ՌԿԳ. 1614
Փրկչին»: — Տեղեկութիւն՝ մաս մը հրատա-
րակուած. հմտ. Ակիւնեան Հ. Ն., Մովսէս
Գ. Տաթեւացի..., էջ 227—228:
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Անուամբ անեղին Աստուծոյ Հաւր, եւ ի
փառս ծնեցելոյն ի նմանէ անեղապէս Որդոյն
միածնի եւ ի դովեստ բիւցեղոյն ի Հաւրէ
Հօղոյն ճշմարտի: Այս մեր գիր հոգեւորա-
կան բարձր հրամանի հաստատութիւն է եւ
աւրհնութիւն: Ի Տեառն Տէր Մելքիսէթ կա-
թողիկոսէ ծառայի ծառայիցն Յիսուսի
Քրիստոսի Տեառն մերոյ: Ծնորհաւք եւ ողոր-
մութեամբ նորին կաթողիկոս ընթհանուր
ամենայն Հայաստանացս: Եւ եպիսկոպոսա-
պետ Հայոց մեծաց եւ պատրիարք արեւելեան
եւ Վաղարշապատու: Զոր աւրհնութեամբն
Աստուծոյ զրեմք ի սուրբ եւ ի հռչակաւոր,
յանուանի եւ՝ յակնաւոր վանքն ի Նախա-
վկայն եւ ի սահմանեալ թէմն եւ ի վիճակն
իւր բոլորովին: Ի Զուղայ եւ իւր վանքն:
Ի յԱստապատ եւ իւր վանքն: Ի Ծամբ (եւ)
իւր վանքն, ի յԱրարք եւ ի Զաղաց տեղն եւ
իւրեանց վանքն: Ի Մահլաղան եւ ի Ղաւրուին,
ի Կրէքէց: Եւ այլ ամենայն թէմն եւ ի վի-
ճակն իւր բոլորովին: Որոց այդոցիկ բնակ-
չացը ամենեցուն առհասարակ ի միասին:
Մեր ի Քրիստոս Աստուած հաւատացելոցը:
Պատուական եւ սրբասէր քահանայիցը: Աս-
տուածասէր եւ բարեպաշտ պարոնացը: Գո-
վելի եւ հաւատարիմ իրաւայդատ ըսայիս-
նուր: Իմաստուն վաճառականացը: Հար-
կեւոր եւ բարէգործ տանուտրացը: Զեռնայ-
հմուտ արուեստապիտացը: Աշխատասէր հո-
ղայգործացը: Եւ ամենայն հայսեան եւ քրիս-
տոսադաւան մերոց ժողովրդականացը առ-
հասարակ մեծայմեծացը եւ փոքունցը, ա-
բանցը եւ կանանցը, ծերոց եւ տղայոցը,
երիտասարդաց եւ կուսից եւ ամենայն չա-
փու հասակի: Մեծաւ փախարքամբ շնորհացն
Քրիստոսի եւ աղաւթիւք սրբոյն Գրիգորի
Լուսաւորչին մերոյ: Ի ձեռն Հօղոյն սրբոյ
առաքեմք ձեզ ողջոյն սիրոյ ի մէնջ եւ աւրհ-
նութիւն առաքելական եւ յաստուածընկալ
սուրբ Նշանէս վանկոյ եւ ի բաղմայնորհա-
բաշխ աջոյս մերոյ սուրբ Լուսաւորչին Գրի-
գորի եւ յերկնայհանգէտ սուրբ աթոռոյս
առաքելական: Եւ ի մեր սուրբ առաքելոցն
Թադէոսի եւ Բարդուղիմէոսի եւ ի յայլ
սրբոցն նշխարացս առաքելոցն եւ հայրա-
պետացն, ճգնաւորաց եւ մարտիրոսաց: Յո-
րոց ի սոցա արագայհաս սքանչելայգործ
կարող զաւրութեամբն եւ աւրհնութեամբն
պահպանեալ փրկեանջիք յամենայն վտանդից
փորձանաց հոգւոյ եւ մարմնոյ տամբ եւ
որդովք, եւ ամենայն գոյիւք ամէն: Գիտու-

թիւն լիցի ձեզ ամենեցուն ըստ հոգւոյ յոյժ
սիրելիք որդիք իմ ի Քրիստոս ծնեալք սուրբ
աւազանան ի Հօղոյն սրբոյ սրբոյն Գրի-
գորի Լուսաւորչին մերոյ: Վիճակ Մա-
ղարթարա վանուց սուրբ Ըստեփանոս Նա-
խավկային Զուղայոյ, յԱստապատայ, ի
Ծամբիձորոյ, Մահլաղանայ, Ղուրուխոյ Ժո-
ղովուրդք առ հասարակ, տեսաք զտաաջի
հայրապետաց հաստատած բանն. մեք այլ
վերբասին հաստատեցար: Զամենայն աւրի-
նաւոր հաս եւ իրաւունքն լիով եւ անթերի
աուրք ի ձեռն Պետրոս արհնպիսկոպոսիզ
զմահու եւ զկենաց: Զտեսանական եւ զսրբայ-
նուէր եւ զմատաղ կենդանեաց եւ զանկար-
ծամահից, զկողոպուտ ննջեցելոց եւ զեր-
զբնայհարից, զհաս տանց քահանայից եւ
զամենայն իրաւունս նոցա եւ մի ոք իշխեցէ
խորել իրաւանց դորայ եւ կամ ձեռնայմուխ
լինել կամ հակառակել բարձր հրամանիս մե-
րոյ եւ թէ ոք յանդգնեցի պատիս կրեցէ:
Որով աւրհնեալքն ի սրբանեալ տէր Պետրոս
արհնպիսկոպոսէտ աւրհնեալ եղիցին յԱս-
տուծոյ եւ ի մէնջ. կապեալքն եւ որոշեալքն
ի նմին մնացեն մինչեւ զըջացին եւ առցեն
զարձակումն ի Պետրոս եպիսկոպոսիզ կամաւ
եւ ոչ ի հարկէ: Վասն որոյ ի մտանել դորայ եւ
արհնեալքն աւրհնութեան եւ բարձր հրա-
մանիս մերոյ առ ձեզ եւ սուրբ մեռունիս: Իջցէ
եւ շնորհք ողորմութեանն Աստուծոյ յերկնից
ի վերայ ձեր եաւթնայպատիկ եւ լցուցէ զձեզ
ամենայն հոգեւոր եւ մարմնաւոր բարու-
թեամբ: Բարձր է ձէնջ զամենայն ցատումն,
զպատուհաս զտարայթամ մահ ի յաշխարհէ
ձերմէ: Տացէ ձեզ Տէր Աստուած շնու-
թիւն, անդորրութիւն եւ խաղաղութիւն:
Բուսոց եւ անկոց ձեր աճողութիւն եւ քաղցր
պաղպաքութիւն: Պաճարեղէն անասնոց ձեր
անսխալ ծննդականութիւն եւ ամենայն բա-
րեաց ձեր լիութիւն եւ առատութիւն եւ
աւրհնեաց զձեզ Քրիստոս Աստուած զամե-
նեսեան առ հասարակ հոգւով եւ մարմնով
ամէն: Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ա-
րասցէ եւ զքանաւոր երկիրք ձեր զործնա-
կանս եւ արդիւնականս զործել զարդարու-
թիւն: Եւ աւրհնեաց զձեզ զամենեսեան
Քրիստոս Աստուած մեր, որպէս զի զա-
ռաւրեայ կեանս վայելիցէք եւ յերկնից թա-
գաւորութեան հասանիցէք ընդ ամենայն
սուրբս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ
է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն:
Եւ ի զալ նամակիս մերոյ ի թէմս եւ ի վի-

ճակատի սուրբ ընտանիքն Նախավկային իջեց շնորհք եւ ողորմութիւն գետաւորէն եւ աղբերաւորէն ի վերայ ձեզ եւ լցուցէ զձեզ Տէր Աստուած ի հոգի եւ ի մարմին, ի բան եւ ի դործ, ի կեանս եւ ի մահ, աստ եւ ի հանգերձեալն ամէն: Այլ եւ ազատարարն Աստուած փրկէ եւ ազատէ զձեզ որպէս ազատեաց զնոյ ի ջրհեղեղէն եւ զԱրարչամ ի դող զամորեան պատերազմէն, զիսրայէլ ի փարաւոնի գերութենէն, զբնութիւն Ադամայ ի դժոխոց չարչարանացն: Նոյն փրկիչն եւ ազատիչն ամենայնի արարիչն Աստուած փրկէ եւ ազատէ զձեզ յերեւելի եւ աներեւութ թշնամոյն, ի մարդայրէմ վազանաց՝ ի անիրաւ պահանջողաց, ի քարայտիրա բռնաւորաց եւ անողորմ դատաւորաց, պահէ ի պէսպէս փորձանաց, խնամարկէ թեւայտարած, պահէ ի խառն ախտից մեղաց եւ ամենայն պատահալաց ամէն: Ծնորհեցաք ի ձեռն զորայ ձեզ պարզեալ հողեւորական զիւրն աւճաթեան զորարոյս եւ դաստուածադորձակ սուրբ մեռոնն ի լուսաւորութիւն Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ: Զնոյն ի ճակատն նշան հաստատութեան յաւճումն քահանայութեան ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհնելոյն ամենայն յաւիտեանս ամէն: Գրեցաւ զիր աւրհնութեան բարձր հրամանիս մերոյ, կնքեցաւ վերոյ ծաղկաւէտ մեծ վատանեաւս կամաւք բարերար մարդասիրին Աստուծոյ աւրհնելոյն ի յաւիտեանս եւ անորաւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Կատարողք հրամանիս մերոյ աւրհնելք Աստուծոյ եւ ամենայն սրբոց եւ ի մէնջ ամէն: Գրեցաւ կոնդակս ի թիփս Ռիփ ի Ապրիլէլ ԻԸ ձեռամբ մեղսպարա Սարգիս Իրեցոյ ի յերեւան քաղաքի: Հրամանաւ Տեառն Տէր Մեղիսէթ կաթողիկոսի ամենայն Հայոց:

ԺԴ.

ԿՈՆՏԱՆՍ ԳՈՒԻԹ Գ. (1587—1628) եւ ՄԵԼՔԻՍԵԴ ԳՈՒՆԵՑԻ (1593—1624) ԿԱՌՈՂԻԿՈՍՆԵՐՈՒ

Դաւիթ եւ Մեղիսէթ (կամ Մեղիսեղեկ) կաթողիկոսներու անունովը կայ Նախավկայի կոնդակ մը, զոր թէպէտ Ստեփանոս Զուղայեցին Միքայէլ կաթողիկոսի կոնդակին հետ սկզբնապէս արտադրած է, սակայն մոտեցած է զայն յիշատակել եւ յիշած է միայն Մեղիսեղին առանձին հանած կոնդակը (համար 3):

վերը): Թէ Ստեփանոս զայն յիշատակելու մոտեցած է անկէ յայտնի է որ՝ անիկա արքայականով եւ քահանայականով (համար 15) կոնդակ զիտէ եւ սակայն առանց դաւիթ-մեղիսեղեկեան այս կոնդակին Նախավկայի կոնդակներու թիւը կ'իջնայ 13ի: Հետեւաբար ասկէ դատ դեռ կայ ուրիշ մըն ալ, որ մնացած է անյիշատակ³:

Այս կոնդակը բաւական դժուարութիւններ կը հանէ մեր առջեւը:

Ծանօթ է որ նախապէս կաթողիկոս ընտրուած է Դաւիթ (1587ին), որ Մեղիսեղ վարդապետը կաթողիկոս կը ձեռնադրէ ազգային-եկեղեցական գործերն աւելի լաւ յառաջ վարելու համար եւ կամ ստիպումի տակ (Առ. Դաւրիթեցի, Պատմ., էջ 6—7): Եւ սակայն այս կոնդակին մէջ նախ Մեղիսեղ կը յիշուի եւ ապա Դաւիթ — այս է նախերգանքին մէջ — իսկ վերջաւորութեանը միայն Մեղիսեղ: Այս հարցը զուցէ կը լուծուի միայն այն ենթադրութեամբ որ՝ ինչպէս նախորդը նաեւ այս կոնդակը Մեղիսեղ հանած ըլլայ, բայց պատշաճութեան կամ ընթերցողներուն վրայ աւելի խոր ազդեցութիւն ընելու համար Դաւիթ կաթողիկոսի անունն ալ գրած է: Եւ կամ պիտի խորհինք թէ Դաւիթ անունը ետքէն աւելցուած է:

Երկրորդ հարցը թուականի հարցն է, որ կարծես թնջուի մըն է: Կոնդակին վերջաւորութեանը գրուած է՝ «Գրեցաւ զիրս օրհնութեան բարձր հրամանաւ մեծի սուրբ Աթոռոյս էջմիածնի ձեռամբ Յակոբ զպրի: Ի ըստ մարդեղութեան եւ ծննդեան փրկչին մերոյ ՌԶՁԳ (1694), ի սրբոյն Գրիգորէ ՌԷԶ (1096 + 301 = 1397) եւ ի թուականութեանս Հայոց ՌԼԸ (1038 + 551 = 1589) եւ ի մեր նաախ ի սուրբ աթոռս առաջին ամի (Մեղիսեթի)»: Ահա չորս թուականներ՝ 1694, 1397, 1589 եւ առաջին տարի Մեղիսեղի կաթողիկոսութեան, զորոնք պէտք է համաձայնեցնել:

Ընդհանրապէս Մեղիսեղի կաթողիկոսութեան առաջին տարին կը գրուի 1593, սակայն ինչպէս Հ. Ն. Ակինեան ուշադիր եղեր է նա 1591ին (եւ այն առանձին) արդէն կաթողիկոս կը յիշուի (համար. Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 35): Գուցէ կարելի ըլլայ խորհել թէ՛ Մեղիսեղ սոյն յիշատակութեան

³ Չեմ կարծեր որ կոնդակներու չարքին մէջ Ստեփանոսի աչքին առջեւ եղած ըլլայ Աշոտ արքայի նուիրողներն իբրեւ «կոնդակ»:

համեմատ 1589ին արդէն կաթողիկոս էր, թէպէտ կարծես Առաքել Դաւրիթեցին այս վարկածին կը հակառակի, վասն զի կը գրէ թէ Դաւիթ, որ կաթողիկոս եղած էր արդէն 1587ին (եւ ոչ եւս աթոռակից) «յամս ինչ վարեաց» եւ ապա «մինչդեռ էր կենդանի եւ յիշխանութեան կաթողիկոսութեան ձեռնադրեաց ինքն միւս եւս կաթողիկոս, որում անուն էր Մեղիսեթ» (Պատմ., էջ 6): Եթէ այդ «ամս ինչ» միայն մէկ երկու տարի ընդունինք՝ այն առեւն 1589 Մեղիսեղի կաթողիկոսութեան առաջին տարին կ'ըլլայ: Գրիգոր կաթողիկոսը 1587էն վերջ այլ եւս չի յիշատակուիր եւ «Կ'երեւայ թէ Գրիգորի մահէն ետքը աթոռակցութեան կանչուած է Մեղիսեղեկ» (Ակինեան Հ. Ն., Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 35), զուցէ 1589ին:

Անցնինք միւս թուականներուն: Զանոնք կարելի չըլլար համաձայնութեան բերել 1589ի հետ: Լուսաւորչեան թուականն է ՌԷԶ (= 1096 + 301 = 1397): Այդ թուականը բնադրին փրկչական թուականին (ՌԶՁԳ, 1694) մերձեցնելու համար հարկ է սրբադրել ՌԳՁԳ (1393 + 301 = 1694), իսկ հայկական թուականին համաձայնեցնելու համար պէտք ուղղել՝ ՌԻՁԶԸ կամ ՌՄԶԸ (= 1288 + 301 = 1589): Իսկ փրկչական թուականն է ՌԶՁԳ (1694), որ սակայն պէտք է սրբադրել ՌԵՁԳ (1593): Այն պարագային որ համարուի թէ Մեղիսեղ Առաքել կաթողիկոսէն յետոյ կաթողիկոս եղած է (Առաքել վերջին անգամ կը յիշուի 1593ին. համար. Ակինեան Հ. Ն., Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 35) այն ժամանակ 1594 տարին Մեղիսեղի կաթողիկոսութեան առաջին տարին կ'ըլլայ եւ միւս թուականներն ալ ասոր համեմատ սրբադրելու է (զր. ՌԵՁԳ = 1293 + 301 = 1594, հյկ. ՌԽԳ = 1043 + 551 = 1594): Սակայն այդ վարկածն ընդունելու առեւն ինչպէս մեկնել Մեղիսեղի 1591ի յիշատակութիւնը: Այդ ալ սխալ համարել: Կարճ ըսենք: Նորապոյն եւ ճշգրտոյն ազդեւորները պիտի կարենան (յուսով ենք) օր մը հայ կաթողիկոսներու դահակութեան թուականները եւ անոնց հանած կոնդակներու թուականները ճշդել եւ ուղղել:

Այս կոնդակին ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ չենք կրնար ընել, բայց ԲՈՎԱՆԳՆՈՒԹԻՒՆԸ է՝ «Անուամբ անեղին Աստուծոյ Հօր եւ ի փառս ծնեցելոյն ի նմանէ անեղապէս Որդւոյն Միածնի եւ ի գովեստ բղիցեղոյն ի Հօրէն

Հողւոյն ճշմարտի: Այս մեր զիր հողեւորական բարձր հրամանի հաստատութիւն է եւ օրհնութիւն: Մեղիսէթ եւ Դաւիթ ծառայք ծառայիցն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ Տեառն մերոյ: Ծնորհօք եւ ողորմութեամբ նորին կաթողիկոս ընդհանուր ամենայն Հայաստանեայց: Եւ պատրիարզ յարեւելեան (եւ) Վաղարշապատու:

Չոր դրեմք ի յամէնօրհնեալ եւ աստուածապահ յանուանի յակնաւոր մայրաքաղաքը ի Սոյ որ է Զերեւանդ զաւառ եւ յամենայն վիճակն իւր բոլորովին: Ի Ղարաղարայն որ բաժանի յԱռաքելոց յերկրէն եւ զնայ մինչեւ ի Սորատափայն եւ բաժանի ի Սարճատայ: Ի յերասխայ մինչեւ ի Մարանդայ զրիւկն: Երկրիս իւր յերկրոյն եւ այլ ամենայն սահմանեալ թէմն իւր ի սուրբ Ստեփանոս Նախավկային: Ի Շամբի ձորն, նախ եւ յառաջին Շամպն եւ իւր վանքն, ի Զաղացակ եւ իւր վանքն. յԱրարքն եւ իւր վանքն, ի Զուղա եւ իւր վանքն. ի յԱստապատ եւ իւր վանքն. ի մեծ եւ յակնաւոր քաղաքն Նախչուան. զայ մինչեւ ի յերասխ չնով եւ աւելով: Յորոց այդոցիկ բնակչացը ամենեցուն ի միասին առհասարակ: Մեր ի Քրիստոս Աստուած հաւատարիմ ըստ հողւոյ յոյժ սիրեցեալ ցանկալի եւ պարծանաց հողեւորացը, պատուական եւ սրբապէր քահանայիցը, աստուածասէր եւ բարեպաշտն աւաղաւորացը, իմաստուն վաճառականացը, փառաւոր եւ աստուածասէր զէպարտացը եւ Աղախորդացը, հարկեւոր եւ բարեգործ տանուակցացը, ձեռնահմուտ արհեստաւորացը, աշխատասէր հողագործացը, եւ ամենայն հայասնու եւ քրիստոսաղաւան մերոց ժողովրդականացը, արանց եւ կանանց, ծերոց եւ աղսոց, երիտասարդաց եւ կուսից, մեծամեծաց եւ փոքունց եւ ամենայն չափու հասակի, մեծաւ փափաղամբ ի շնորհացն Քրիստոսի, աղօթիւք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, կարօղութեամբն Աստուծոյ Հօր, իմաստութեամբն Որդւոյն միածնի, սիրով Հողւոյն սրբոյ. առաքեցաք ողջոյն, ողջոյն սիրոյ ի մէնջ օրհնութիւն առաքելական: Ի աստուածընկալ սուրբ Նշանէս Վանդոյ եւ ի շնորհարաշխ Աջոյն մեր Լուսաւորչին Գրիգորի եւ յերկնահանգէս սուրբ Աթոռոյս առաքելական: Յորոց յարազահաս սքանչելագործ կարօղ զօրութեամբն եւ օրհնութեամբն պահպանեալ փրկեալիք յամենայն վատալից փորձանաց հողւոյ եւ մարմնոյ, տամբք եւ

որդուք եւ ամենայն դոյլւք, զարմօք եւ զաւակօք եւ խոտակօք ի հողի եւ ի մարմին, ի բանս եւ ի դործս, ի մահ եւ ի կեանս, աստ եւ ի հանդերձեայն, ամէն: Եւ բարձցէ ի ձէնձ Տէր Աստուած զամենայն պատուհաս յանցանաց, որ զան ի վերայ աշխարհի, զսոյն, զսուրն, զգերութիւնն, զմահ տարածամ, զթրթուր, զգալկոն, զճորեակ, զմարախ, զժանկ, զկայծակ, զկարկուտ եւ զամենայն պատիժ պատուհաս(ի) որ զան ի վերայ աշխարհի վասն մեղաց մերոց: Եւ յետ ազգեացս ելանելոյ լսել տայ ձեզ զերանաւէտ բարբառնս որ ասէ՝ Եկայք օրհնեալք Հօր իմոյ ժառանգեցէք զանսպառ ուրախութեանն. ամէն: Որ եւ արժանի արացէք Քրիստոս Աստուած մեզ զամենայն յեկեղեցիս ուղղափառաց տեսանել զարարիչն մեր զՀայրն՝ Աստուած, Որդին միածին՝ զոչն տերանց, զԱստուած Հօրին՝ բաշխօղն շնորհաց հրեշտակական պարակցութեանն՝ ի միութիւն յերկնաւոր փեսային. ամէն: Եւ ընդ օրհնութեամբս զիտութիւն լիցի ձեզ ամենեցուն սիրելի որդիք մեր ի Քրիստոս բնակիչք Մաղարգայ վանից սուրբ Ստեփանոսի Նախավկայի մասմանեալ թէմին եւ վիճակին աստուածապահ զիւրաքաղաքիդ Ջուղայոյ եւ յԱստապատայ զեղձդ, ի Շամբայ ձորի յերկրին եւ ի Ձէրեանդ զաւառին Խօյոյ բոլորովին թէմին եւ վիճակին: Զի քանի որ ձեր առաջի եպիսկոպոսունք մեռան զուք մնացիք առանց հոգեւոր առաջնորդի թէպէտ որ կայր քորեպիսկոպոսունք, այլ ոչ տեսուչ եւ առաջնորդ եւ հովիւ ոչխարաց, վասն որոյ ի տուէ եւ ի զիշերի ազօթիւք հայցէի յԱստուծոյ տալ ձեզ բարի հովիւ եւ առաջնորդ ըստ կամաց իւրոց: Իսկ ամենագութն Աստուած նայեցեալ ի բարեք վարս ձեր եւ անրիժ հաւատս ձեր զթացեալ ի ձեզ Քրիստոս Աստուածն մեր յայտնեաց պարծանաց որդիս մեր սուրբնուէք քահանայդ աէր Մարտիրոս քաջ բարունի վարդապետդ, որ եկն առ մեզ վկայական թղթով ձերով: Բայց վասն այդ մեծահոգակ Նախավկայի սուրբ վանաց շինութեան եւ ձեր յոյժ սիրուա հարկեցաք զմեր որդի Մարտիրոս վարդապետդ լինել ձեզ եպիսկոպոս արք, եւ տեսաք զբարեք վարս զորա. եւ հաւանեցաք իմաստութեամբ եւ արիութեան զորա. ընտրութեամբ Աստուծոյ եւ հաճութեամբ ամենեցուն ձեռնադրեցաք մեծաւ հանդիսի աստուած ընկալ սուրբ Նշանաւս վանից եւ Աջով սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին եւ աս-

տուածախաւս սուրբ Աւետարանաւս զսրբաւէր եւ զպատուելի քահանայդ զոէր Մարտիրոս քաջ բարունապետդ հոգեւոր առաջնորդ ձեզ: Եւ առաքեցաք զբաւորական օրհնութեամբ հրամանաւ մերով զալ առ ձեզ եւ սերմանեցի ի միջի ձերում վարդապետել, խրատել, եւ ուսուցանել յօրէնս եւ ի պատուիրանս Տեառն կալ անարատութեամբ ի տուէ եւ ի զիշերի, տալով զանձն օրինակ ձեզ ամենեցուն, ինքն արացցէ եւ ձեզ ուսուցցէ սրբութեամբ, արդարութեամբ, եւ խոնարհութեամբ եւ երկիւղիւ, սիրով առ Աստուած եւ ընկերս իւր, եղբայրսիրութեամբ, աղքատ(ա)սիրութեամբ, ողորմածութեամբ եւ ազօթիւք լինել այցելու որբոց եւ այրեաց եւ օգնական լինել ամենայն կարօտելոց եւ կարեկից սիրով Քրիստոսի: Կոչեցցէ զիմաստունս եւ զարժանաւորս ի կարգ կիսասարկաւազութեան, սարկաւազութեան եւ քահանայութեան: Կալցի եւ հրամանաւ մերով ի վերայ ձեր իշխանութիւն կապելոյ եւ արձակելոյ յերկինս եւ յերկրի. զմեղուցեալսն կշտամբել եւ զղջացեալսն ընդունիլ յապաշխարութիւն: Որով եւ զուք ամենեքեան սիրելիք ի մեր ի Քրիստոս, զաստուածապատիւ եւ զառաքելաշնորհ արքեպիսկոպոսդ ձեր եւ քաջ բարունապետդ զաէր Մարտիրոսդ մեծաւ պատուով եւ յոյժ սիրով ընդունեցէք որպէս զհրեշտակ Աստուծոյ եւ զառաքելական այր եւ ամենայն հոգեւոր բանից եւ խրատուց զորա, որ շահ եւ օգուտ է հոգուց ձերոց հնազանդութեամբ ունկնդիր լինիլիք: Եւ ի սրբոց հայրապետաց կարգեալ եւ սահմանեալ հասք եւ իրաւունք զոր պարտիք տալ Աստուծոյ եւ յաթոնոյ բաժին տուք ի սուրբ Նախավկայի աթոռն: Զմուտք քահանայից եւ զամենայն ընտանեաց նոցա. զերախայրիս կալոց եւ հնձանաց, այսինքն եղնաղլուխ Ա. մարզան հաց եւ զորակ մի զինի ի չափ հնձանին, զտեառնականն, որ է արեւամատաղն եւ զնուիրականն որ է սրբադրամն, զերաւունս մատաղաց, կենդանեաց եւ մեռելոց, որ է յիշատակ ի դուռն Աթոռին. յանկարծամահ, առակամահ եւ զամենայն իրաւունս մահու եւ կենաց լի եւ անթերի տուք ի ձեռս զորա, որպէս զի զտուրս զուարթառաս սիրէ Աստուած: Եւ մի ոք իշխեսցէ հակառակիլ զմա եւ կամ հրամանիս մեր եւ արգելցէ իրաւանց տալոյ կամ խորիցի, եւ կամ այլազգիք անկանիցի եւ ուժ հասուցանիցէ Նախավկայի վանիցն, արհիւպիսկոպոսին տէր

Մարտիրոս վարդապետին: Զի որ ոք որ զմահակառակ լիցի թէ ոք աշխարհի քորեպիսկոպոս կամ աշխարհական, նայ այնպիսին զրկեալ եւ որոշեալ լիցի փառաց Որդւոյն Աստուծոյ: Եւ եթէ աշխարհական աւաղ անկանիցի եւ սուրբ աթոռին վրաս հասուցանէ ընդ անիծիւք լիցի, եւ ի ներքոյ բանադրանաց կացցէ. անէժքն Կայենի առցէ, պատիժն Կորխայ եւ Դադանայ, մասն Յուդայի եւ Խաչահանաւքն: Որով օրհնեալքն ի զմանէ օրհնեալք լիցին եւ անիծեալքն ի նմին մնացեն մինչեւ զղջացին, վասն որոյ ի զալ զորա առ ձեզ եւ հոգեւորական հրամանիս մերոյ եւ սուրբ մեռոնիս իջցէ շնորհք եւ ողորմութիւն մարդասիրին Աստուծոյ յերկնից ի վերայ ձեր Եթնապատիկ եւ լցուցցէ զձեզ ամենայն բարութեամբ: Բարձցէ ի ձէնձ զամենայն ցատուանս եւ զպատուհասնս եւ տացէ ձեզ շինութիւն յանդորդութիւն եւ յազազութիւն: Բարձցէ յամենայն անդէոց ձերոց զպատահարս եւ տացէ աճողութիւնս եւ քաղցր պողպատութիւն. պաճարեղէն անանոց ձերոց անսխալ ծննդականութիւնս եւ ամենայն բարեաց ձերոց լիութիւնս եւ առատութիւնս եւ օրհնեցցէ զձեզ զամենեանս Քրիստոս Աստուածն մեր, որպէս զի զառօրեայ զկեանս ձեր ուրախութեամբ եւ երկայնութեամբ անցուցանիցէք եւ յետ աստեացս յերկնից արքայութեանն հասանիցէք ընդ ամենայն սուրբս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է օրհնեալ անդրաւ յաւիտենին. ամէն:

Եւ շնորհեցաք ի ձեռն զորա ձեզ պարգեւ հոգեւորական զսուրբ իւրն օծութեան՝ աստուածաղործեակ սուրբ մեռոնն ի յուսաւորութիւն նորածնելոցն սուրբ Աւագանան. որդեգրութիւն Հօրն երկնաւորի եւ ժառանգակցութիւն Քրիստոսի յուսոյն մերոյ, որ է օրհնեալ յաւիտենանս. ամէն:

Նոյն ի ճակատն նշան հաստատութեան յօժուան քահանայութեան ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյ, բայց ամ ամի նոր առցէ ի մէնձ եւ զհինն ի նորն խառնեցցէ ի փառս Քրիստոսի օրհնելոյն յաւիտենանս. ամէն:

Գրեցաւ զիրս օրհնութեան բարձր հրամանաւ մեծի սուրբ աթոռոյս էջմիածնի ձեռամբ Յակոբ զպրի: Ի ըստ մարդեղութեան եւ ծննդեան Փրկչին մերոյ ՌՁԺՂԳ ամի, ի սրբոյն Գրիգորէ ՌՂԶ ամի եւ ի թուակաւորութեանս Հայոց ՌԼԸ. ի մեր նստելս ի սուրբ աթոռս առաջին ամի: Եւ վասն առաւել հաստատութեան ձեռնադրեցաւ զմեր սովորական

կարմիր ձեռնագրովս, կնքեցաւ վերոյ ծաղկաւսս ի փառս մարդասիրին Աստուծոյ օրհնելոյն ամէն:

Ի Մեղիթսթ(է)՝ շնորհօքն եւ ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կաթողիկոս ամենայն Հայոց»:

(Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, 683, թղ. 7բ—10ա, արտադրուած սկզբնադրէն՝ 1736ին ի ձեռն Ստեփ. Զուղայեցւոյ:)

ԺԵ.

ԿՈՆՏԱԿ ՄՈՎՍԵ Պ. ՏԱԹԵՒԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (1629—1632)

Մովսէս Պ. Տաթեւացի կաթողիկոսը, որ կարճ ժամանակի մէջ շատ արդիւնք ունեցաւ, 1631 Նոյեմբեր 11ին Նախավկայի վանքին համայնքին կոնդակ մը կը գրէ առաջնորդին եւ ժողովրդեան մէջ եղած վէճը բանալու համար:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՈՆԴԱԿԻՆ՝

Նիւք՝ բարակ թուղթ, սակայն կոնակը նոր թուղթ մը կպցուած: — Մեծութիւն՝ 43 × 27.5: — Գրութիւն՝ 30 × 22: — Տղթ՝ 34: — Գիր՝ նօտր, պարզ: Առաջին երկու գրերը «Յի» թռչնազիր, վայելուչ, առաջին երկու տողերը զլիսազիր եւ կարմրազիր: — Լուսանցազարդք՝ երկերկու գծերով աչքն ու ձախէն բնազիրը բաժնուած է լուսանցքերէ: — Զարդագիրք՝ «Յի» թռչնազիր, սիրուն: — Նկարք՝ չունի: — Կնիք՝ մէկ հատ, մեծ. «Տէր Մովսէս կաթողիկոս ամենայն Հայոց եւ Պատրիարք Վաղարշապատի սուրբ Աթոռին թվ. ՌՂԸ. Յիսուսի Քրիստոսի ծառայ Մովսէս վարդապետ վիճակ Ստաթէ»: — Հանգամանք՝ չափազանց վրաստուած, այլ եւ այլ տեղեր կամ հաղիւ ընթեռնելի կամ անընթեռնելի: — Ծանօթութիւն՝ Կոնակին վրայ գրուած է «Կոնդակ Միտաս կաթողիկոսի՝ ի թվ. Հայոց ՌՁ, որով հաստատէ թեմ Նախավկայի զգաւառն Նախիջևանայ եւ Զուղայու, փրկչական Թիւ 1631»: Անոր վարը — անկիւն մը — «Գնեցաւ առ Kohler գրավաճառի ի Լայպցիգ յամի 1914 Սեպտ. Հ. Ն. Ա.» (այսպէս գրուած է մեր Մատենադարանի մէջ գտնուած յաջորդ կոնդակներու բոլորին կոնակին): — Տեղեկութիւն՝ այս կոնդակը

Սխալմունքով Մովսէս անուան տեղ Միտաս գրուած է: Միտաս Ա. Ակնցին կաթողիկոսութիւնը բաժ է 1751—1754:

հրատարակած է Ալկինեան Հ. Ն. իր «Մովսէս Գ. Տաթևացի Հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը» գործին մէջ, Վիեննա 1936, էջ 228—231:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Մովսէս կաթողիկոս ծառայ սրբոյ աթոռոյ էջմիածնի յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան, շնորհք առաքելական եւ աստուածային օրհնութիւնն ի վերայ աստուածախնամ սուրբ Նախավկայի վանից օրհնեալ սեպհական թէմի եւ վիճակի, մանաւանդ Զուգայու եւ Աստապատու քահանայից, սուրբաթաւորաց եւ առ հասարակ ժողովրդոց, մեծամեծաց եւ փոքունց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, երիտասարդաց եւ կուսից եւ ամենայն չափու հասակի հաւատացելոց ի Տէր: Ծնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ ամենակալէ Յիսուսէ Քրիստոսէ եւ ի սուրբ Հոգւոյն կենարարէ եւ առատածաւալ պարգեւաբաշխէ եւ շնորհապարգեւէ եւ ամենագորէ եւ մարդասիրէ. ամէն:

Օրհնութիւն Հօր, պահպանութիւն Որդւոյ, նախախնամութիւն ամենասուրբ Հոգւոյն միշտ եւ հանապազ եղիցի ի վերայ ձեր եւ օր ըստ օրէ լցուցէ զձեզ փառօք, պատուօք եւ արգասալիք ճոխութեամբ իբրեւ զորթն եւ զուստ սաղարթախիտ եւ պտղալից զբախտ անկեալ ի զնացս Հոգւոյն վտակաց, կալ մնալ ձեզ խաղաղական կենօք եւ պարտապայ ամօք մինչ ի խորին ծերութիւնն ամէն:

Եւ ընդ օրհնութեանս ծանիք սիրելիք, զի դուք ի սկզբանէ թէմ եւ վիճակ էք Նախավկայի վանիցն ի նախնեացն հարցն սրբոց սահմանեալ եւ հաստատեալ մինչեւ ի մեզ: Եւ սուրբ Նախավկայի առաջնորդ եղեանն ինքնակամ է չրջին ընդ ամենայն տեղիս: Է ոչ եւ կարգ մեզ քակել զցանդ հարցն սրբոց կամ զնոցին սահմանեալ վիճակն առնուլ եւ տալ վասն մարդահասակութեան կամ ակնառութեան, որ է ընդդէմ օրինաց եւ կանոնաց նախնեաց սրբապետ զուգայու կարծէք Զուգայու եւ Աստապատու կողմանէն, ոչ է այդպէս, այլ թոյլ տուաք ժամանակ ինչ ըստ անյարմար զնացից եւ անմիարան լինելոյ նոցա, զի թերեւս գայցեն յուղղութիւն: Եւ ինչ սեպհական առաջնորդ ի սուրբ Նախավկայի հաստատի, նոցա հասք եւ իրաւունքն ի նա պարտի հասանիլ: Եւ ինչ օրինաց եւ կանոնաց հարցաքննութիւն լինի, թէ հասի թէ չհասի, թէ կենդանեաց եւ թէ մեռելոց, զամենայն ի նմանէ պարտիք տեղեկանալ, զի հաստատունն արքուն սուրբ Նախավկայն է եւ սեպհական առաջնորդ ձեր եւ տեղեկացն նստողն է... (անընթեռնելի) լսողք այսմ բանի, այլ որ հակառակի եւ կայ ընդդէմ այսմ թէ ի քահանայից եւ թէ յաշխարհակալաց ի ներքոյ անիծից եւ կապանաց լիցին հոգւով եւ մարմնով եւ որք հնազանդք եւ լսողք լինին բանիս եւ կամարարք նախնեաց սրբոց հարցն աւանդութեանց օրհնին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց նորա եւ ի մէնջ:

Դարձեալ այսուհետեւ ինչ որ կանոնական հասք եւ իրաւունք որ սրբոյն Սահակայ եւ այլ սուրբ հայրապետացն հաստատեալ է մի պակասեցուցանէք, այլ զուարթ սիրով եւ առատ սրտիւ զձեր վանքին սուրբ Նախավկայի թէ մատաղ, թէ պտուղ եւ թէ հոգեբաժին եւ այլ կանոնական ընծայք աննուաղ եւ անթերի տուք ի դուռն Սուրբ Նախավկային, զի մեզ է սովորութիւն որ սուրբ հայրապետաց կոնդակով եւ վկայական գրով հաստատեալ թէմք հանել վանքէս: Վասն որոյ եւ դուք զձեր վանքին հաս եւ իրաւունքն անպակաս տուք:

Կատարողք հրամանաց մերոց օրհնիք յԱստուծոյ եւ յամենայն սրբոց նորա եւ ի մէնջ. ամէն: Հայր մեր յերկինս:

Գրեցաւ օրհնութեան թուղթս ի թուին Հայոց Ռեւ Զ Նոյեմբեր ամսոյ ԺԱ եւ Նաւասարդի ԻԼ ի փառս Յիսուսի Աստուծոյ մերոյ. ամէն 5»:

ԺԶ.

ԿՈՆՏԱՆԿՆԵՐ ՓԻԼՊՊՈՍ Ա. ԱՂԲԱԿԵՑԻ (1633—1655) ԵՒ ՅԱԿՈԲ Գ. ԶՈՒՂԱՅԵՑԻ (1655—1680) ԿԱԹՈՂԻԿՈՍԵՐՈՒ:

Նահապետ կաթողիկոսի կոնդակէն յայտնի է թէ այս երկու կաթողիկոսներն ալ Նախավկայի եւ Աստապատի մէջ եղած վէճի կարգի դնելու համար կոնդակ հանած են, սակայն զանոնք մեր արամադրութեան տակը չունինք: Նահապետ կը գրէ՝ «Զհաստատուն կոնտակսն Լուսահողի Մովսէս կաթողիկոսին, Փիլիպպոս եւ Յակոբ կաթողիկոսաց, նաեւ հոգեւոր հօր մերոյ Եղիազար կաթողիկոսին» (հմմտ. վարը):

5 Բառ մը կամ տող մը անընթեռնելի:

ԺԷ.

ԿՈՆՏԱՆԿ ԵՂԻԱԶԱՐ Ա. ԱՅՆԹԱՊՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ (1682—1691)

Յակոբ Զուգայեցի կաթողիկոսին յաջորդը Եղիազար Այնթապցի կաթողիկոսը 1684, Նոյեմբ. 17ին Նախավկային վանքին նպաստելու համար կոնդակ մը կը հանէ:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ՝

Նիւրք՝ Թուղթ շատ բարակ եւ մթնադոյն: — Մեծուրբիւն՝ 37 X 22: — Գրուրբիւն՝ 30 X 20: — Տաղք՝ 33: — Գիրք՝ նօսր: — Թէեւ փոքր, բայց յստակ, առաջին տողը կարմիր թանաքով: — Զարդագիրք՝ «Յի» թռչնադեր, բաւական սիրուն: — Լուսանցազարդք՝ մէկական զծով լուսանցքներէն բնազիրը բաժնուած: — Նկարք՝ կաթողիկոս բառին վրայ պարզ կաթողիկէ մը: — Կնիք՝ մէկ հատ՝ «Շնորհօքն Աստուծոյ Եղիազար կաթ. ամենայն Հայոց». պատկերը՝ Յիսուս Քրիստոս: — Հանգամանք՝ բաւական մաքուր մնացած, վերի լուսանցքը քիչ մը մլատաւած, բայց վերանորոգուած: — Ծանօթութիւն՝ կոնակը գրուած է՝ «Կոնդակ Եղիազար կաթողիկոսի առ Թիֆլիզցիս, որով յորդորէ օղնական լինել նորոգութեան Նախավկայի ի թվ. Հայոց Ռեւ. Գ. (1684)»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Եղիազար կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարկ Վաղարշապատու երկնադիտակ եւ արփիաքատակ մեծի եւ դերապայծառ սրբոյ աթոռոյս էջմիածնի: Յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան: Ծնորհք առաքելական եւ աստուածային բաղմապատիկ օրհնութիւն եւ նախախնամական գթութիւն ի վերայ աստուածախնամ օրհնեալ մայրաքաղաքիս Թիֆլիզու եւ չրջակայ գիւղօրէիցդ ազանց հայկազունեաց եւ այլոց քրիստոնէից երկրպագուաց խաչի եւ աստուածութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ, Եպիսկոպոսաց, Վարդապետաց, Քահանայից, Պարոննազիբիդ այլ եւ երեսփոխանաց, Մելիքերաց Թաւառներաց Տանուտեարց, Վաճառակաւաց, Տօլվաթաւորաց եւ առհասարակ ժողովրդականացդ, մեծի եւ փոքու տեսողաց զնամակս օրհնութեանս մերոյ եւ հաւատացելոց ի Քրիստոս Յիսուս յոյսն բնաւից ազանց խաչակրօնաց. ամէն: Ծնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ

ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ եւ ի սրբոյ Հոգւոյն կենարարէ եւ յառատածաւալ պարգեւատուէ եւ շնորհատու բարերարէ եւ մարդասիրէ ամէն: Օրհնեացէ զձեզ Տէր Աստուած մեր եւ զարդարեացէ հոգւով եւ մարմնով, տամբ եւ տեղօք, զարմօք եւ զաւակօք, որդւովք եւ դատերօք, սիրելօք եւ բարեկամօք, ընչիւք եւ ապրանօք, վարօք եւ վաստակօք, այդեստանօք եւ բուրաստանօք, եւ ամենայն գոյականօք հոգեկանօք եւ մարմնականօք ամէն: Եւ ընդ տեսանապարդեւ օրհնութեանս ծաներուք, սիրելիք մեր ի Տէր, զի ձեզ յայտնի է եւ հաւատեալ գիտակ էք ամենեքեան, եթէ ո՛րպէս հռչակաւոր եւ մեծահանդէս վանք է սուրբ Նախավկայն եւ սքանչելադործ, որ այժմ եւս յայտնապէս առնէ սքանչելիս մեծամեծս եւ յառաջմէ շինեալ էր արքայէն Հայոց Ողորմածէն Աշոտոյ Բագրատունոյ վկայարան սուրբ Ստեփաննոս Նախավկային, զոր եւ յետոյ նորոգեալ եղեւ ի Յակոբ կաթողիկոսէն, բայց եթէ յինչ պատճառի փութով խարխալեալ եւ քայքայեալ եղեւ, զոր եւ այժմ կամին զգլուխն նորոգել, եւ բայց տեսեալ մեր զթուղթ խնդրոյ ձերոյ եւ լուսաւ թէ ասացեալ էք սուրբ Նախավկայի առաջնորդացէն մէկն զայ մեք օղնութիւն ամենմք, որովհետեւ մասն բարի ընտրեցիք եւ նախ քան ասելն մեր դուք յօժարութեամբ խնդրեալ էիք եւ մեք հրաման տուաք Յոհանն խնդրեալ էիք եւ մեք հրաման տուաք Յոհանն եւ Պետրոս վարդապետաց զալ առ ձեզ, եւ ով ոք երկոցունցն գայցեն առ ձեզ կամ Ոհան վարդապետն եւ կամ Պետրոս վարդապետն սիրով ընկալիք եւ ըստ իւրաքանչիւր կարողութեան առատապէս ողորմութեամբ եւ արդիւնաւոր տրօք սատարեսլիք զմա եւ մի այլոց նման ունեցիք զղա, քանզի սուրբ մի Նախավկայն ձեր հոգւոյ տուն է, մէկ այն՝ Նախավկայն ձեր հոգւոյ տուն է, մէկ այն՝ պէս արդիւնք ցուցէք, որ պատճառ լինիք նորա նորոգութեան, զի նորոգողն ամենայնի Հոգին սուրբ նորոգեացէ զհոգիս ձեր եւ ննջեցելոց ձերոց: Որ է օրհնեալ ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն եւ փոխանակ արոց եւ ողորմութեան ձերոյ ընդ միոյն զբերապատիկն առջիք աստ եւ ի հանդերձելուսն. Ամէն: Հայր մեր որ յերկինս ես:

Գրեցաւ ի թուին հազար հարիւր երեսուն եւ երեք. Նոյեմբեր ամսոյ տասն եւ եօթն:

եւ հաստատեցեն զամենայն ||| (երեք բառ կարելի չէ կարդալ) : Արդ պատուիրելով պատուիրեմ հոգեւոր որդւոցդ մերոց, զի հլու եւ հնազանդ լիցիք (յ)ամենայն բանից եւ հրամանաց նոցին եւ առանց բանից դոցա մի ինչ առնիցէք ոչ մահու եւ ոչ կենաց, ոչ հասի եւ ոչ չհասի : Մի ոք իցէ որ հակառակ եւ ընդդիմադարձ երեւեսցի դոցա, զի այնպիսին մեզ եւ սուրբ աթոռոյս է ||| (քանի մը բառ անընթեռնելի) եւ հնազանդքն : Այլ եւ կապեալն ի դոցանէ կրկին կապեալ է եւ արձակեալն՝ արձակեալ ըստ հրամանին Քրիստոսի : Նաեւ զամենայն հոգեւորական արդիւնան ձեր ||| (բառ մը անընթեռնելի) զպողի, զսրբադրամն, զժամուցն, քառասնիցն, զհոգեբաժինն, զկողոպտան, զտօնականն եւ զայլ ամենայն իրաւունս, այլ եւ տունք քահանայից, մէլիքի, երեսփոխի, ժամկոչի, զգրի եւ կամ յանկարծամահի, պոռնիկի եւ զայլ ամենայն արդիւնս հոգեւորս կիսարածին արասլիք, ուղիղ դատաստանաւ զկէսն սոցէք ի դրուես Նախավկային եւ զկէսն սոցէք սուրբ Ստեփաննոսին : Որով մասն եւ բաժին ընկալլիք ի շնորհաց նոցին հանդերձ ննջեցելովք ձերովք սատ եւ ի հանդերձելունս . ամէն : Հայր մեր :

Գրեցաւ հաս(տատութեան)ն կոնտակս ի թուին ՌՃԽԴ (Աե)պտեմբերի (ի դրան սուրբ) էջմիածնի :

Այս կոնդակին ճախակողմեան լուսանցքին վրայ կան զանազան ստորագրութիւններ եւ կնիքներ՝ զժրատարար բաւական վաստակ եւ զժուարընթեռնելի կամ անընթեռնելի : Սկիւնք : — || կոնդակս վկայութեամբ սուրբ Ստեփաննոս Նախավկային : — Կնիք՝ ՈՐ ՈՏ ||| ԲԻԱ ՎՊ : — .. թռայել վրդպտիս առաջնորդ Առաք ||| ընդ(ոռնելի) է : — Կնիք՝ ||| ԲԻ ԾՌ Ա ||| ՎՊ ՏԱՊ ||| Ն ՅԻ : — .. Միածնի ||| զակ եմ : — Ինձ Մատթէոս վարդապետիս առաջնորդ սրբոյ Կարապետի զպարճ է, ընդունելի է : Մեսրոպ զպրիս ընդունելի է : Կնիք՝ ՅԻ ԲԻ ԾՅ ՍԻՄԷ || ՎԱՐԴԱՊԵՏ || Իէ : — ||| վարդապետիս Ջուղայեցոյ (ընդուն)ելի է : — Նախհեւանցու : — Կնիք անընթեռնելի : — ||| ԼԻ ||| տիրիս (ընդ)ունելի է : — Կնիք՝ ԲԻ ԾՌ ԳՐԻԳՈՐ ԵՊՍԿՊՍ ՋԱՅՅԻ : — ||| Իզոր Պրնարի ընդունելի է : — Կնիք՝ ՅԻ ԲԻ ||| ԾՌ ՄԱՐՏԻՐ(ՈՍ) ||| ՅԻ ՌՂ : — Կնիք՝ ԲԻ ԾՌ ՊԱՐՈՆՏԷՐ(?) ԳՐ. ՎՐ || Ա : — (Պ)րնարիս Սիւնեաց (ընդուն)ելի է : —

Կնիք՝ ||| ԿԲ ||| : — Յակոբ Երեւանցոյ (ընդ)ունելի է : — ՅԻ ԾՌ(?) ՏՐ ՄԿՐՏ(Ի)Չ ՌՃԻ : — Տէր Մկրտիչ յերկրէ ընդունելի է :

ԺԹ .

Ա. ԿՈՆԿԱԿ ԱՂԵՔՍԱՆԿՐ Ա. ՋՈՒՂԱՅԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (1706—1714)

Աղեքսանդր Ա. Ջուղայեցի կաթողիկոսին անուանով երեք կոնդակ զըրուած է Նախավկայի վանքին համար : Անոնց անդրանիկը Գալուստ վարդապետը՝ 1712ին սոյն վանքին առաջնորդ կը հռչակէ :

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիւք՝ բարակ, բայց զիմացկուն թուղթ : — Մեծուքիւն՝ 44 × 31 : — Գրութիւն՝ 33 × 23 : — Տոպ՝ 39 + 1 = 40 : — Գիր՝ հօտրադիր յտակ, առաջին տողը կարմիր : — Զարդագիրք՝ «ՅԻ» եւ «Է» թռչնադիր, շատ սիրուն : — Լուսանցագարդ՝ չունի : — Նկարք՝ ոչ այնքան յաջող կաթուղիկէ մը : — Կնիք՝ երկու հատ, մեծը «Յիսուս» շուրջը երկտասան առաքելներու զլուխները եւ վրան զըրուած՝ «Տէր Աղեքսանդր կաթողիկոս ամենայն Հայոց եւ Պատրիարք Վաղարշապատի սր. Աթոռոյ ||| ԱԾ ||. Քրիստոսի ծառայ Աղեքսանդր վարդապետ Ջուղայեցի ՌՃԻԵ» : Պղտիկը ունի՝ «Աղեքսանդր ||| ||| (Կաթ. ?) ՌՃԾԵ» : — Հանգամանք՝ լաւ պահուած : — Ծափօքութիւն՝ կոնակը զըրուած՝ «Աղեքսանդր հոգեւոր տերոջ Նախավկային բոլոր թեմին եւ վիճակին կոնդակն է» :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Աղեքսանդր կաթողիկոս ամենայն Հայոց եւ Պատրիարք Վաղարշապատու Լուսակառոյց եւ տիրանկար, լուսազարդ եւ Աստուածաէջ մեծի եւ սրբոց Աթոռոյս էջմիածնի, որմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան եւ նամակ պահպանութեան. շնորհք առաքելական եւ աստուածային բազմապատիկ աւրհնութիւն ի վերայ սուրբ Նախավկայի վանից բոլոր թէմի եւ վիճակի, այսինքն՝ Ծամբու, Աբարբու, Զաղաց տեղու, Հին Ջուղայու, Ազատակու, Օղպինու, Տիկինու, Մահլաղանու, Ղօտուխու, Կրէրէցու, եւ զոցին եղեալ Քահանայից, Դօլվաթաւորաց, Տանուտերաց, Երեսփոխանաց եւ առ հասարակ ամենայն ժողովրդոց, մեծամեծաց եւ փոքունց, արանց եւ կանանց, ձերոց եւ աղայոց, ինդակ ի յայն ընաւից ի Քրիստոս Յիսուս. ամէն :

Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ ամենակալէ եւ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ եւ սրբոյ Հոգւոյն կենարարէ եւ յառատածաւալ պարգեւատուէ եւ բարերար մարդասիրէ . ամէն :

Օրհնեցէ զձեզ Տէր Աստուած մեր եւ բարգաւաճեալ զարդարեաց զձեզ հոգւով եւ մարմնով եւ ամենայն բարութեամբ եւ օր ըստ օրէ լցուցէ զձեզ փառօք (եւ) պատուօք եւ արգասալիք ճոխութեամբ եւ իբրեւ զորթս եւ որպէս զոստո սաղարթախիտ եւ պողալից զբախտ անկեալ ի դնացս Հոգւոյն վտակաց կալ մնալ ձեզ խաղաղական եւ պարագայց ամօք յամերամ ժամանակօք . ամէն :

Ընդ աստուածապարգեւ շնորհազեղուն եւ երկնառատ աւրհնութեանս ծաներուք սիրելիք եւ հարազատ որդիք մեր եւ լուսածնունդ զաւակք Մօրս Լուսոյ Սուրբ էջմիածնի : Զի հրամայէ Սրբազան առաքեալն Քրիստոսի Սուրբն Պօղոս թէ՛ յիշեցէք զառաջնորդս ձեր, որ խօսեցան ընդ ձեզ բանն կենաց : Սիրելիք, որպէս Քրիստոս զլուխ է ամենայն սրբոց եկեղեցեաց, նմանապէս հոգեւոր առաջնորդն զլուխ է ամենայն ժողովրդոց : Վասն որոյ ըստ խնդրոյ եւ ըստ հաւանութեան ձերոյ մեր սիրելի եւ հարազատ որդի Գալուստ վարդապետ սուրբ Նախավկային հաստատուն առաջնորդ կարգեցի՝ մինչեւ ցմահն իւր այլ փոփոխումն ոչ զոյ, պարտիք սիրով եւ մեծաւ պատուօք ընդունել զզա, ոչ թէ այլոց նման համարիք, մեր սիրելի է եւ ընտանի ձեր, որքան սէր եւ ընդունելութիւն զմա կառնէք մեզ եւ Սուրբ Աթոռոյս է համարեալ : Այլ եւ պատուիրեմ սիրելի որդեկացդ զբան եւ զքարոզութիւն զորին մեծաւ սիրով ընդունեսլիք եւ ամենայն զիմաց թեւ թիկունք ձեռնտու եւ օղնական լինիք ձեր առաջնորդ եւ մեր սիրելի Գալուստ վարդապետիդ, որ այդ տունդ չէն եւ պայծառ պահեցէ, մի ոք ներհակ եւ հակառակ երեւեսցի զմա, թէ կարգաւորք եւ թէ կառարձականք, զի այնպիսին մեզ եւ սուրբ Աթոռոյս է ներհակ եւ հակառակ, մանաւանդ վերջն պատիժ եւ դառնութիւն կրելոց է ի մէջն, այլ եւ կապեալն ի դմանէ կապեալ կողմի եւ արձակեալն՝ արձակեալ, ըստ հրամանի Տեառն, եւ որքան հաս եւ իրաւունք ունի թէ մահու եւ թէ կենաց ամէն լի եւ (յ)անթերութեան զորս յանձնէք, եւս առաւել տունք քահանայից, տանուտէրաց, երեսփոխաց, ժամկոչաց, զգրաց, անհաղոր-

դից, պոռնիկաց եւ այլն ըստ կարգին, սոքա տէրունի առաջնորդին է եւ եւս տեսանեմ ձեր հարազատ որդիութեան սէրն թէ որպէս տիրութիւն եւ հաւատարմութիւն կառնէք զմա . եւ ամենայն զիմաց հլու եւ հնազանդ լինիք ձեր առաջնորդ եւ մեր սիրելի որդի Գալուստ վարդապետիդ, զէրա սուրբ Աթոռոյս ամենայն կողմանէ զա պիտանի էր, այլ վասն սիրոյ բարեպաշտից ուղարկեցի ձեզ առաջնորդ, տեսանեմ թէ՛ որպիսի սիրով կու մեծարէք եւ միտիթարէք . ի ձեզ է յանձին եւ ապաստան այսուհետեւ եւ կատարօղք հրամանաց մերոց աւրհնին ի յԱստուծոյ եւ ամենայն սրբոց մաքուր աւրհնութեամբն : Դարձեալ ինչ եկեղեցական քահանայից հոգեւոր դատաստան լինի, առաջնորդն զլուսնն անէ, աշխարհականի բան չկայ եւ շնորհք Տեառն եղիցի ընդ ձեզ հովանի եւ պահպան . ամէն : Գրեցաւ ՌՃԿԱ թվին Նոյեմբերի ամսոյ ԺԷ . վերջ :

Ի .

Բ. ԿՈՆԿԱԿ ԱՂԵՔՍԱՆԿՐ Ա. ՋՈՒՂԱՅԵՅԻ ԿԱԹՈՒ

Աղեքսանդր Ա. կաթողիկոսը Նախավկայի վանքին պարտքերուն վճարումին եւ նորոգութիւններու համար ընդարձակ կոնդակ մը կը հանէ :

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիւք՝ թուղթ, զիմացկուն : — Մեծուքիւն՝ 42 × 28 : — Գրութիւն՝ 41 × 27 : — Տոպ՝ 48 : — Գիր՝ հօտր, շատ զիւրբնութեան լի, առաջին տողը կարմրադիր՝ զլիսակիր : — Զարդագիրք՝ «ՅԻ» ինչպէս մնացած մասէն կարելի է եզրակացնել՝ շատ սիրուն, բայց մեծ մասով կտրուած : — Նկարք՝ կաթուղիկէ մը, կտրուած մեծ մասովը՝ զրեթէ թեռնի : — Կնիք՝ մէկ հատ, անընամբողջապէս : — Հանգամանք՝ լաւ պահուած է թեռնի : — Հանգամանք՝ լաւ պահուած է թեռնի : — Կոնդակ Աղեքսանդր կոնակին վերի կողմը՝ «Կոնդակ Աղեքսանդր կաթողիկոսի վասն ողորմութիւն ժողովելոյ Գալուստ վարդապետի, անթուական» :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Աղեքսանդր կաթողիկոս ամենայն Հայոց եւ Պատրիարք Վաղարշապատու Լուսակառոյց եւ տիրանկար Սրովբէաճէմ եւ քրովբէապատ եւ տիրանկար Սրովբէաճէմ եւ քրովբէապատ Լուսազարդ եւ աստուածաէջ քրիստոսահին Լուսազարդ եւ աստուածաէջ քրիստոսահին Մեծի եւ Սրբոյ Աթոռոյս էջմիածնի : Յօրմէ Մեծի եւ Սրբոյ Աթոռոյս էջմիածնի եւ նամաճանեալ հասցէ գիր աւրհնութեան եւ նա-

մակ պահպանութեան. չնորհք առաքելական եւ աստուածային բաղմապատիկ արհնու- թիւն եւ նախախնամական զթուփիւն ի վե- րայ Գողգնեաց տանդ, Երինջակու, Նախ- չուանու եւ զիւզորէկց, նախ Եկեղեցեաց, Առաջնորդաց, Մելիքաց, Իշխանաց, Գօլվա- թաւորաց, վաճառականաց, արուեստորաց, տանուտէրաց, երեսփոխանաց, արուեստա- ւորաց եւ առհասարակ ամենայն ժողովրդոց մեծամեծաց եւ փոքունց եւ ամենայն չարու- հասակի հաւատացելոց. ամէն: Ենորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ ա- մենակալէ եւ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ եւ ի Սրբոյ Հոգւոյն կենարարէ եւ յառատածաւալ պարզեւտուէ եւ բարեբար մարդասիրէ. ամէն:

Օրհնեաց զձեզ Տէր Աստուած մեր եւ բարգաւաճեալ զարդարեաց զձեզ հոգւով եւ մարմնով եւ ամենայն բարութեամբ եւ օր ըստ օրէ լցուցէ զձեզ փառօք պատուօք եւ արգասալիւր ճոխութեամբ եւ իրբեւ զորթս եւ որպէս դոստո սախարթախիտ եւ պողա- լից դրախտ անկեալ ի գնացս Հոգւոյն վտա- կաց կալ մնալ. ամէն: Այլ եւ արհնութիւն աստուածային եւ ազօթք սուրբ Աստուածա- նին եւ Յօհանու պարապետին եւ սրբոյն Ստե- փաննոսի Նախավկային եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին եւ ամենայն սրբոց նորա. ամէն: Այլ եւ արհնեաց զձեզ Տէր մեր եւ տացէ կրկին՝ բարութիւն, առատութիւն եւ լիութիւն, խաղաղութիւն, զօրութիւն եւ ա- բրիութիւն, սէր եւ միաբանութիւն եւ յամե- նայն բարի իրաց յաջողութիւն եւ կատարե- լութիւն եղիցի ընդ ձեզ. ամէն: Հայրն Աս- տուած զձեք հայրքն արհնեացէ, Որդին միածին ծաղկեալն ի խաչին զձեք ծաղկեալ որդիքն եւ դստերօքն՝ արհնեացէ, Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ զձեք հոգին եւ ձեք ննջեցելոց հոգին արհնեացէ. ամէն:

Եւ ընդ աստուածապարզեւ չնորհազեղուն եւ երկնառատ արհնութեան ծաներուք սի- բելի եւ հարազատ որդիք մեր եւ Լուսա- ծնունդ գուակը Մօրս լուսոյ սուրբ էջմիածնի: Զի հրամայէ Սրբազան առաքեալն Քրիստոսի Սուրբն Պօղոս թէ՛ ի պէտս սրբոյ հազօրդե- ցարուք եւ նոյն գունակ Տէրն մեր Յիսուս Քրիստոս յորդորէ զհաւատացեալսն իւր ի սուրս ողորմութեան թէ՛ Երանի ողորմա- ծաց, զի նոքա ողորմութիւն գացեն, զի թէպէտ ամենայն բարեգործութիւնք մարդ- կան ընդունելի է առաջի Աստուծոյ, բայց

սակայն ողորմութիւն չնորհելն դերկերոյ պարծի ի վերայ ամենայն բարեգործութեանց մարդկան: Մանաւանդ որ ի պէտս սրբոց է եւ եկեղեցեաց նորոգութեան զայն առաւել պարծի առաջի Աստուծոյ: Յորոց սրբոց զմինն սուրբ Նախավկայի վանքն, ձեզ ամենեցուն զահիր է, որ այսքան տարի է այդ վանքը խախտեալ կայր վասն չքաւորութեան, եւս առաւել զանձակատունն նորոգեաց (sic) եւ եկեղեցին կիսակատար է, մանաւանդ վանքն այլ բազում պարտուց ներքոյ է, զոր մեք հա- ւաստին գիտակ եմք: Վասն որոց առաջնորդ նորին մեր սիրելի եւ հարազատ որդի Գա- լուստ վարդապետն լալոտ աչօք եկն առ մեզ զիմեաց եւ մեր տեսեալ (դ)աղքատութիւն եւ զչքաւորութիւն սուրբ Նախավկայի վանիցն սուաք արհնութեան նամակս դմա: Իսկ զուք պարտիք սիրով եւ մեծաւ պատուօք ըն- դունել զդա, ոչ թէ՛ այլոց ժողովք արարաց նման հայրք՝ վասն շինութեան եկեղեցոյ է, պարտիք ամենեքեանդ զութ շարժիլ եւ մի- մեանց բարեաց պատճառ լինիլ վասն Աստու- ծոյ եւ յուսոյ արքայութեան եւ ձեք ծաղկեալ որդոց արեւուն մատաղ, ամենայն զիմեաց ձեռնտու եւ օղնական լինիք մեր սիրելի որդի Գալուստ վարդապետին. լինի թէ՛ ձեք տրօքն եւ ողորմութեամբն այն վանքն շինիլ եւ պար- տուցն ազատիլ եւ ողորմութիւն տուողացդ մասն եւ բաժին եղիցի: Այլ եւ կրկին պա- տուիրելով պատուիրեմ սիրելի եւ հարազատ որդեկացդ մերոց, որ ի սէր սուրբ Նախա- վկային եւ մեր սիրոյ եւ արհնութեան խա- թերն լաւ սիրով եւ պատուօք մեծարէք եւ ընդունէք զդա. որքան սէր՝ պատիւ դմա առնէք սուրբ Նախավկային եւ մեզ է համա- րեալ. ապա ձեք տունն է, ոչ թէ՛ այլոց վա- նից նման է, ինդրեմ որ իշխանօք, զօլվա- թաւովք կանգնիք լիապէս եւ առատ ողոր- մութիւն տայք, սուրբ Նախավկայի շինու- թեան եւ նորոգութեան, զի սուրս առատս սիրէ Աստուած, սիրելիք մեր, ձեք ամենե- ցուն յայտնի է, որ սուրբ Նախավկայի առաջի նահատակն է Քրիստոսի, հոչակաւոր վանք է, թէ՛մ է եւ վիճակ է սակաւ. միշտ ձեզ բարի սովորութիւն ունիք ի լուսահոգի նախ- նեացն ձերոց, որ ամ յամէ այդ սուրբ Տանդ օղնութիւն եւ քօմակի արարեալ էք, այժմ այդ ձեք տունն է. պիտի որ միշտ տայք լիա- պէս եւ ողորմիք այնպիսի բարեգործու- թեանց. ապա տեսանեմ ձեք սէրն եւ հարա-

զատ որդիութեան նշանն թէ՛ որպիսի քաղցր աչօք կու հայրք մեր սիրելի որդի Գալուստ վարդապետիդ, որ ի ձէնջ չնորհակալութիւն զրէ մեզ եւ մեք միշտ արհնող եմք ձեզ եւ զուք ըստ տրոց եւ ողորմութեանց ձերոց վարձն ի Քրիստոսէ եւ սուրբ Նախավկայէն սաջիք զմիոյն ճապատիկ եւ հաղարապա- տիկ, եւ որքան ժամ, պաշտօն եւ պատարազ որ ի սուրբ տունն մատչի ձեզ եւ ձեք ննջեցե- լոց մասն եւ բաժին եղիցի. ամէն:

ԻԱ.

Գ. ԿՈՆՎԱԿ ԱՂԵՐՍԱՆՎՐ ԶՈՒՂԱՅԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Աղեքսանդր Ա. կաթողիկոսը Նախա- վկայի վանքին պարտքերուն վճարումին հա- մար ուրիշ կոնդակ մըն ալ ուղղած է ժո- զովրդեան:

ՆԿԱՐԱՍԳՐՈՒԹԻՒՆՆ՝
Նիւթ՝ Թուղթ, բարակ: — Մեծուքիւն՝ 35 X 22: — Գրուքիւն՝ 33 X 22: — Տողք՝ 39: — Գիր՝ նօտր, հաստ ու որոշ. սկիզբը մէկ տող կարմրազիւր, բայց դունատած: — Զարդագիրք՝ «ՅԻ» սիրուն, սակայն զրեթէ կիսով կտրուած: — Լուսանցազարդք՝ չունի: — Հանգամանք՝ բաւական մաքուր: — Ծա- նօքուքիւն՝ կոնակին վրայ գրուած՝ «Շրջա- բերական կոնդակ, անթիւ, Աղեքսանդր կա- թողիկոսի վասն ողորմութիւն տալոյ Նախա- վկայի»:

ԲՈՎԱՆԵՆԱԿՈՒԹԻՒՆՆ՝
Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Աղե- քսանդր կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարկ Վաղարշապատու Լուսակառօց եւ Տիրանկար լուսազարդ սրբոյ Աթոռոյս էջմիածին: Յորմէ ժամանեալ հասցէ զիւր արհնութեան եւ նամակ պահպանութեան: Ենորհք առաքելական եւ աստուածային բաղ- մապատիկ արհնութիւն ի վերայ ընդհանուր ամենայն երկրի Քաղաքաց եւ զեօզորէկց, առաջնորդաց, քահանայից, զօլվաթաւորաց, տանուտէրաց, վաճառականաց, Արուեստա- ւորաց, երեսփոխաց եւ առ հասարակ ամե- նայն ժողովրդականաց մեծամեծաց եւ փո- քունց, արանց եւ կանանց, ձերոց եւ տղայոց, խնդալ ի յոյսն բնաւից. ամէն:

Ենորհք ընդ ձեզ եւ երկնաւոր խաղաղու- թիւն յԱստուծոյ Հօրէ ամենակալէ եւ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ եւ սրբոյ

Հոգւոյն կենարարէ եւ յառատածաւալ պար- զեւտուէ. ամէն:

Օրհնեաց զձեզ Տէր Աստուած մեր եւ բարգաւաճեալ զարդարեաց զձեզ հոգւով եւ մարմնով եւ ամենայն բարութեամբ եւ օր ըստ օրէ լցուցէ զձեզ փառօք եւ արգասալիւր ճոխութեամբ եւ իրբեւ զորթս եւ որպէս դոստո սաղարթախիտ եւ պողալից դրախտ անկեալ ի գնացս հոգւոյն վտակաց կալ մնալ ձեզ խաղաղական կենօք եւ պարապոյց ամօք յամերամ ժամանակօք եւ ընդ երկայն ա- ւուրբք միշտ եւ յաւէտ. ամէն:

Եւ ընդ աստուածապարզեւ չնորհազե- ղուն եւ երկնառատ օրհնութեան ծաներուք սիրելի որդիք մեր: Զի հրամայէ սրբազան Առաքեալն Քրիստոսի սուրբ Պօղոս թէ՛ ի պէտս սրբոյ հաղորդեցարուք. զի թէպէտ ա- մենայն բարեգործութիւնք մարդկան ընդու- նելի է առաջի Աստուծոյ, բայց սակայն ողոր- մութիւն չնորհելն դեր ի վերոյ է, մանաւանդ որ ի պէտս սրբոց է եւ եկեղեցեաց նորոգու- թեան, զայն առաւել պարծի առաջի Աստու- ծոյ: Յորոց սրբոց զմինն է սուրբ Նախա- վկայի վանքն ձեզ ամենեցուն յայտնի է այն վանիցն խարձն չքաւորութիւնն, պարտքն եւ նեղութիւնն եւս առաւել զանդակատունն նորոգեալ են եկեղեցոցն՝ այլ մարամաթ անե- նորքեալ եւ երկնառատ սուրբ տանն լուր եւ նուէրք ոչ զոյ, որ նովաւ սուրբ տանն պակասութիւնն եւ խարձն վճարեն: Սիրելի որդիք պարտական եմք այդպիսեաց սրբոց տանն խնամք տանել, գէրա սուրբ Նախա- տանն Քրիստոսի գլուխ է ամենայն մարտի- վկայն Քրիստոսի գլուխ է ամենայն մարտի- վկայն եւ պարծանք աղիւս Հայոց, միշտ բոսայ եւ պարծանք աղիւս Հայոց, միշտ մեծաւ պատուօք ընդունել զդա, ոչ թէ՛ այլոց ժողովք արարաց նման հայրք, վասն շինու- թեան սուրբ եկեղեցոյ է եւ պայծառութեան թեան սուրբ Նախավկային, պարտիք ամենեքեանդ զութ շարժիլ եւ միմեանց բարեաց պատճառ լինել, վասն Աստուծոյ եւ յուսոյ արքայու- թեան եւ ձեք ծաղկեալ որդւոց արեւուն մա- տաղ ամենայն զիմաց ձեռնտու եւ օղնական տայք սուրբ Նախավկայի աղքատ վանիցն լինիք սուրբ Նախավկայի աղքատ վանիցն լիապէս եւ առատասիրտ ողորմութիւն տայք լիապէս սէր պատիւ դմա կառնէք մեզ հա- եւ որքան սէր պատիւ դմա կառնէք մեզ հա-

մարեալ է, ապա տեսանեմ ձեր հարազատ
որդիութեան սէրն, թէ որպիսի քաղցր աչօք
կու հայրք մեր սիրելի որդի Գալուստ վար-
դապետիդ եւ դուք ըստ արոց եւ ողորմու-
թեանց վարձն ի Քրիստոսէ եւ սուրբ Նախա-
վկայէն առջիք զմիայն ճապատիկ հաղարա-
պատիկ եւ բերապատիկ եւ որքան պաշտօն
պատարազ որ մատչի անդ, ձեզ եւ ձեր ննջե-
ցելոյն մասն եւ բաժին եղիցի. ամէն: Հայր
մեր:

ԻԲ.

Ա. ԿՈՆՏԱՆԿ ԿԱՐԱՊԵՏ ԿԱԹ. ՈՒՆԵՑԻԻ
(1726—1729)

Կարապետ Ուլնեցի կաթողիկոսն իր կար-
ձատեւ պաշտօնավարութեան չըջանին երկու
կոնդակ հանած է Նախավկայի համար:
Առաջին կոնդակովը Գալուստ վարդապետն
առաջնորդութեան իր պաշտօնին մէջ կը վե-
րահաստատէ:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ՝

Նիւթ՝ թուղթ հաստ եւ դիմացկուն: —
Մեծուքիւն՝ 45 × 29: — Գրուքիւն՝ 26 ×
22: — Տողֆ՝ 35: — Գիր՝ նօտրադիր փօքը,
բայց զիւրընթեանելի, առաջին երկու տողերը
կարմրադիր. առաջին տողն ամբողջապէս
զլիսադիր: — Զարդագիրք՝ «ՅԻ» շատ սի-
րուն եւ գոյնզգոյն: — Լուսանցազարդֆ՝
չորս կողմերէն լուսանցազօծեր, ձախակող-
մեանը ծաղկաշատ, գոյնզգոյն: — Նկարֆ՝
վերը Հայր Աստուած (ձեռքերը տարածած)
Հոգին սուրբ (աղանի) եւ է, անկէ վար կա-
թողիկէ, գոյնզգոյն, մէջը Յիսուս Քրիստոս
(ձեռքերուն մէջ աշխարհագունդ եւ խաչ):
— Կնիֆ՝ հաստ մը՝ «Շնորհօքն Աստուծոյ Կա-
րապետ կաթողիկոս ամենայն Հայոց թվ.
ՌՃՀԵ»: — Հանգամանֆ՝ լաւ, եղբրքները
քիչ մը փնասուած: — Ծանօթութիւն՝ կոնա-
կին վրայ մարտիտով գրուած՝ «1728»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Կարա-
պետ կաթողիկոս ամենայն Հայոց եւ Պատ-
րիարք Վաղարշապատու Լուսակառոց Տի-
րանկար Աղինասարա Ջուարթնագումար,
Լուսաձեմ եւ Քրովբէապար Մեծի Սրբոյ
Աթոռոյ Էջմիածնի: Յորմէ ժամանեալ հասցէ
զիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան:
Շնորհք Առաքելական եւ հանդերձ Աստուա-
ծային բաղմապատիկ օրհնութիւնն եւ նախա-
ինամական գթութիւնն ի վերայ Տիրապահ,

Աստուածախնամ եւ Քրիստոսաչէն օրհնեալ
բոլոր թէմի եւ վիճակի սրբոյն Ստեփաննոսի
Նախավկային. այսինքն Հին Զուգարոյ, Շամ-
բայ, Զաղացտեղու, Արարքայ, Մահլազայ,
Կրէրեցոյ, Դօրբլոյ, Օղպնոյ, Տիկնոյ եւ Աղա-
տակայ եւ ի միջի դոցին Քրիստոսահին կա-
ռուցեալ սրբոց եկեղեցեաց եւ եկեղեցակա-
նացն Դասուց, Քահանայից, Դօլլաթաւորաց,
Իշխանաց, Տանուտեարց, Երեսփոխանաց եւ
այլ ամենայն առ հասարակ ժողովրդականաց,
Մեծամեծաց եւ փոքունց, Արանց եւ Կա-
նանց, Տերոց եւ տղայոց, Երիտասարդաց եւ
կուսից, եւ ամենայն չափու հասակի հաւա-
տացելոց խնդալ ի Տէր Յիսուս Քրիստոս.
ամէն: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն
յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յի-
սուսէ Քրիստոսէ եւ ի սրբոյ Հոգւոյն կենա-
րարէ եւ յերկնաւոր բարերարէ. ամէն: Զո՛ր
օրհնութիւն Աստուածային. Այլ եւ մաղթանք
եւ բարեխօսութիւն սրբուհւոյ Աստուածած-
նին, Յովաննու Կարապետին, սրբոյն Ստե-
փաննոսի Նախավկային եւ Աղօթք մեծի սրբոյ
Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին եւ ամե-
նայն ընտրելոց սրբոց հանդիցէ ի վերայ ձեր
եւ օրհնեցէ զձեզ Տէր Աստուած մեր ի
յերկնէ եւ ի յերկրէ, ի ծովէ եւ ի ցամաքէ,
ի հրեշտակաց եւ ի մարդկանէ եւ ամենայն
զոյականէ. ամէն: Այլ եւ օրհնեցէ զձեզ Տէր
Աստուած մեր եւ բարդաւաճեալ զարդարեցէ
զձեզ հողով եւ մարմնով, Տամբք եւ տեղօք,
զարմօք եւ զաւակօք, որդւօք եւ դստերօք,
ընչիւք եւ ապրանօք, սիրելեօք եւ բարեկա-
մօք, վարօք եւ վաստակօք, այգիստանօք եւ
բուրաստանօք եւ ամենայն զոյականօք. ա-
մէն: Եւ ընդ աստուածապարզեւ օրհնու-
թեանս նամակաւ ծանուցունմ լիցի սիրելի
որդեկաց մերոց եւ լուսածնունդ զաւակացդ
Մօրս Լուսոյ սուրբ Էջմիածնի, զի հրամայէ
սրբազան Առաքեալն Քրիստոսի Պօղոս ասե-
լով թէ՝ ունկնդիր լերուք առաջնորդաց ձե-
րոց եւ հպատակ կացէք, զի հանապաղ տքնին
վասն հողուց ձերոց եւ որպէս զի համարս
տալոց են առաջի անեղ ատենին Քրիստոսի
եւ զարձեալ ասէ՝ յիշեցէք զառաջնորդս ձեր
որ խօսեցաւ ընդ ձեզ զրանն կենաց եւ արդ
լուարուք սիրելիք եւ ի միտ առէք, զի որ-
պէս Լուսահոգի Աղէքանդր կաթողիկոսն,
ըստ խնդրոց ձերոց զԳալուստ վարդա-
պետը Առաջնորդ է կարգեալ ի վերայ ձեր
մեծաւ հրամանաւ սրբոյ Աթոռոյս եւ հաստա-
տուն կոնտակաւ: Այսօր եւ ես նոյնգունակա-

բար վերստին հրամանաւ եւ հաստատուն
կոնտակաւ կարգեցի զԳալուստ վարդապետը
Առաջնորդ ձեզ, վասն որոյ եւ դուք պարտիք
ամենայնիւ սիրով եւ հնազանդութեամբ ծա-
ուայել դմա եւ մանաւանդ օգնական լինելով
եւ ի թիկունս հասանելով տրօք եւ արեամբք,
զի թերեւս կարասցէ այսպիսի դառն եւ տա-
ժանելի ամանակուոյս այդ աղքատ տունդ կա-
ռաւարել, նա եւս ոչ ոք կացցէ հակառակ
հրամանաց դորա, զի որ ներհակ եւ հակա-
ռակ ոք գացի դմա, մեզ եւ սուրբ Աթոռոյս է
հակառակ եւ ի վաղճանն յետ զառհասա-
չեայ պատժոցն՝ որ ի դմանէ զմեծադոյնն եւ
զլատնակակիծն ի մէնջ կրելոց է, թէ վար-
դապետ իցէ, թէ քահանայ եւ կամ թէ (յ)աշ-
խարհական. այլ ջանացարուք սիրով եւ
միամտութեամբ անսալ բանից դորա, զօրհ-
նութիւն Տեառն եւ զմերս ժառանգել: Զի եւ
դա ուրախութեամբ հովուեցէ զձեզ եւ մի
հողոց հանելով, զի եւ դմա պարտ է միշտ
զալ եւ միթարել զձեզ դրոց բանիւք եւ աս-
տուածային զխտութեամբ՝ ըստ յօրինի ա-
ռաջնորդաց եւ եպիսկոպոսաց, որ ի վիճակս
իւրեանց: Այլ եւ դուք պարտիք ըստ կանո-
նական հրամանի զամենայն հասք եւ իրաւունք
ձեր թէ հողեկան եւ թէ մարմնական, թէ մա-
հու եւ թէ կենաց, զամենայն մի ըստ միջէ լի
եւ անթերի ի ձեռս դորա նուիրել: Այլ եւ տունք
քահանայից, տանուտեարց, երեսփոխանաց,
զղբաց, անհաղորդից, ժամկոչաց, պոռնկաց,
եւ այլ սոյնպիսեաց տէրունի Առաջնորդին է:
Անվրէպ եւ անխափան զայս ամենայն յանձնա-
ջիք ի ձեռս դորա. մի կապեցես, ասէ,
զցուով եղին ի կալոտոյ: Զի արժանի է, ասէ
Առաքեալն Պօղոս, (դ)մշակին ի վարձոյ իւրոյ:
Զի՞նչ է եղն՝ եթէ ոչ (դ)հողեւոր Առաջնորդն,
որ հանապաղ կասէ զկալս աստուածային ցո-
րենոյ աստուածային օրինօք եւ յօրհնագէտս
առնելով եւ անձանձիր ուսուցանելով, որ եւ
խիզ զարոց է տէր զեղինդ ի կասեալ կալսդ
հաւատացելոց եւ հեծանոցաւ իւրով զատո-
ղականաւ սրբել, զբարեգործութեան ցո-
րեանս ժողովել յիշտեմարանս արքայութեան
եւ զաստանայակամ եւ քամակուրուստ աշ-
խարհասէր հարզան ի արկանել հուրն յաւի-
տենից (բն. աւիցենից) ընդ որս եւ զձեզ ա-
զատեցէ Տէր Քրիստոս ի յայնպիսի կիզ-
մանէ եւ զերկնից արքայութեան ժառանգորդս
արասցէ. ամէն: Հայր մեր: Ի սուրբ Էջմիա-
ծին ՌՃՀԵ (1728) թիւն, Յունվարի ԻԲ:

ԻԳ.

Բ. ԿՈՆՏԱՆԿ ԿԱՐԱՊԵՏ ԿԱԹ. ՈՒՆԵՑԻԻ

Կարապետ Ուլնեցին ուրիշ կոնդակով մը
յորդորած է Նախճաւանի եւ հարեան վայ-
րերու ժողովուրդը զրամական եւ նիւթական
օժանդակութեամբ Նախավկայի վանքին կա-
րիքներուն թեթեւացումին սատարելու:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ՝

Նիւթ՝ զիմացկուն թուղթ: — Մեծու-
քիւն՝ 42 × 25: — Գրուքիւն՝ 40 × 24: —
Տողֆ՝ 52: — Գիր՝ նօտրադիր, փօքը. առա-
ջին երկու տողերը կարմիր: — Զարդագիրք՝
«ՅԻ» սիրուն, վերի մասը՝ կտրուած: — Լու-
սանցազարդֆ՝ չունի, աջէն ու ձախէն երկ-
երկու բարակ կարմիր դձերով բնագիրն եւ
լուսանցքն իրարմէ բաժնուած: — Նկար՝ հա-
չկայ, գուցէ թէ երբեմն եղած: — Կնիֆ՝ հա-
զիւ պղտիկ մաս մը փնացած, կտրուած է:
Հանգամանֆ՝ բաւական լաւ, ջուր տեսած է,
վերէն կարեւոր մաս մը պատուած ու
կտրուած: Բնագրին սկիզբէն ալ քանի մը
սող պակաս: — Ծանօթութիւն՝ կոնակին
վրայ մատիտով գրուած՝ «1729»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝

«Յիսուսի Քրիստոսի ծառայ» պատուած,
Պատրիարք Վաղ... պատուած եւ քրովբէա-
պար յաղինասար պատուած սոյս Էջմիածնի:
Յորմէ ժամանեալ հասցէ զիր օրհնութեան եւ
պահպանութեան: Շնորհք առաքելական եւ
աստուածային բաղմապատիկ օրհնութիւնն
եւ նախախնամական գթութիւնն ի վերայ
եւ քրիստոսախնամ օրհնեալ տանդ
տիրապահ եւ քրիստոսախնամ օրհնեալ տանդ
յարեւմտեան: Ուր եւ հասցէ նամակս (դ)այս
օրհնութեան մերոյ ի մայրաքաղաքս եւ ի
փօքրաքաղաքս, ի զիւղաքաղաքս եւ ի զիւ-
ղորեայս, ի յաւանս եւ ի կարաւանս եւ յամե-
նայն շէնս բնակութեան ձեր: Նախ քրիստո-
սահինն եկեղեցեաց եւ նոցին զլուսի կարգեալ
արհի Առաջնորդաց, շնորհազարդ վարդապե-
տաց, մեղաքաւիչ Քահանայից, ուսումնա-
տաց, Սարկաւազաց, պերճազատիւ Իշխանաց,
սէր Սարկաւազաց, վերճազատիւ Իշխանաց,
փարթամայոյդ Տօլլաթաւորաց, հաւատա-
բիւ իրեցիկոսաց, իրաւադատ Մէլիքներաց,
Իմաստասէր Վաճառականաց, վայելչազործ
Իմաստասէր միամտադոյն Ռամկաց,
Արուեստաւորաց, միամտադոյն Ռամկաց,
արդարաւաստակ Հոգադործաց, համեստա-
բարոյ Տանտիկնաց եւ այլ առ հասարակ միա-
համուռ ամենայն ժողովրդականաց մեծա-
մեծաց եւ փոքունց, արանց եւ կանանց, Տե-
րոց եւ տղայոց, Երիտասարդաց եւ կուսից,

և ամենայն չափու եւ հասակի ի Գրիստոս, Աստուած հաւատացելոց ամէն:

Շնորհք ընդ ձեզ եւ երկնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ գեր սկզբնական պատճառ էին ինքնազոյն, զթութիւն եւ ողորմութիւնն ի նորին իսկակից Բանին հականի նոյնազօրի, Սէր եւ քաղցրութիւն համապատուի նոյնն ամենազօր սուրբ Հոգւոյն կենարարէ իջցէ եւ հանդիցէ ի վերայ ձեր, եկեացէ եւ բնակեցցի առ ձեզ իբրեւ զյորձանս գետոց եւ որպէս զվտակս աղբերաց յորդահաս ըզխամբ եւ առատապէս ծաւալմամբ: Ընդ որոյ հովանաւորութեամբն զօրասլիք եւ պահպանեալիք, կտաւարեալիք եւ նախահամեալիք. ամէն:

Այլ եւ զոր օրհնութիւն աստուածային, մաղթանք եւ բարեխօսութիւն ամէնօրհնեալ սրբուհոց Աստուածածնին եւ Յովաննու Կարապետին եւ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչէն եւ յամենայն սրբոց երկնաւորաց եւ երկրաւորաց առ ձեզ լիցի եւ օր ըստ օրէ լցուցէ զձեզ փառօք պատուօք եւ արդասալիք ճոխութեամբ իբրեւ զօթս եւ զոսոս սաղարթախիտ եւ պողալից զբախտ անկեալ ի զնացս Հոգւոյն վտակաց կալ եւ մնալ ձեզ խաղաղական կենօք եւ պարազայց ամօք. ամէն:

Եւ ընդ աստուածապարզելի օրհնութենականի նամակաւս ծանուցումն լիցի սիրելի եւ հոգեւոր օրգեկացի մերոց. Զի հրամայէ Սրբազան առաքեալն Քրիստոսի Պօղոս, եթէ ի պէտս սրբոց հաղորդեցարուք: Նոյնգունակ եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս յորդորելով զհաւատացեալս իւր ի սուրս ողորմութեան, երանի տայ ողորմածացն ասելով՝ Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Եւ զարձեալ հրամայէ՝ եթէ սուք եւ տացի ձեզ, բախեցէք եւ բացցի ձեզ: Արդ հոգեւոր օրգիք մեր, զի թէպէտ ամենայն բարեզործութիւնք մարդկան ընդունելի են առաջի Աստուծոյ, բայց սակայն ողորմութիւն չնորհելն բարձր ի զլուս պարծի ի վերայ ամենայն բարեզործութեանց մարդկան եւ ողորմութիւն տուողացն զվարձս բաղմապատիկս պարզելէ Աստուած: Բանդի տրօք ողորմութեան բանայ Տէր Աստուած յերկրէ զամենայն ցասումն եւ զպատուհասն եւ ծագէ զչնորհս ողորմութեան իւրոյ ի վերայ արարածոց իւրոց եւ տրօք ողորմութեան քաւէ Տէր Աստուած զմեզս մարդկան եւ արժանի

առնէ յերկնից արքայութեան եւ անթառամ պսակացն: Այլ եւ տրօք ողորմութեան հանգիստ եւ արքայութեան պարզելէ Տէր. Աստուած ննջեցելոց ամենեցուն: Եւ յայս բարեզործութիւն պարծի սուրբն Յօհան Ոսկերեանն ասելով՝ Եթէ չամաչէի զողորմածն Աստուած ասէի, բայց ասեմ եւ ոչ ամաչեմ, վասն զի ողորմութիւնն զհոլը գեհնելին շիջուցանէ, զանքուն որդն զժոխային սպանանէ եւ զմարդն հաւասար հրեշտակաց առնէ: Եւ արդ սիրելիք մեր ի Տէր, զի եթէ ողորմութիւն տալն ամենայն ումեք ընդունելի են առաջի Աստուծոյ, բայց որ սակս սրբոց եկեղեցեաց շինութեան եւ վանորէից հաստատութեան, սրբոց ուխտից պայծառութեան ընծային նուէրս եւ ողորմութիւնս առաւել հաճոյ եւ ընդունելի լինին առաջի Աստուծոյ: Յորոց մի ի բաղմաց է վանք եւ լուսազարդ տաճար եւ եկեղեցի սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, որ չնորհօքն Քրիստոսի կառուցեալ կայ յերկրիս Արարաչեան ի նահանգին Նախիջեանու՝ ի պահպանութիւն եւ ի մխիթարութիւն լուսաւորչածին ազգիս հայկազունաց, որ անդրէն գետեղեալ կան: Բայց այժմս ի սաստիկ եւ ի խոտաղոյն հարկապահանջութենէ այլասուրբ, նաեւ յառաջադոյն կողոպուտ եւ աւար լինելոյ սուրբ ուխտն այն անկեալ կայ ի ներքոյ անհուն պարտուց եւ դատարկացեալ ամենայն բարեզարդութեանց եկեղեցական անօթից եւ այլ ամենայն պիտոյից իւրոց, մանաւանդ քանիցս անդամ ստայօղ բանիւ զբարտեցցին սուրբ ուխտն այն առնելով՝ տուգանս յուրիս, որ մեք տեղեակ իսկ եմք եւ ըստ կարի մերում օղնութիւն հասեալ եմք սուրբ ուխտին յայնստիկ վասն որոյ չնորհեցաք նամակս զայս ի ձեռն մեր հոգեւոր օրգի եւ նորին վանաց միաբան Ստեփաննոս վարդապետին զալ եւ չըջիլ ի զրուս աստուածասիրացի եւ ինդրել կամաւոր ողորմութիւն եւ քանդի այն սուրբ վանիցն ոչ զոյ այնքան յատուկ թէ՛մ եւ վիճակ, ուստի կարիցեն զլեռնացեալ պարտսն վճարել եւ զքանդեալն նորոգել եւ զմիաբանից եւ երթ եւ եկողաց կարիսն լցուցանել, յազապ որոյ պարտիք ամենեքեան յօժար կամօք եւ զուարթ սրտիւ զմիմեանս յորդորելով եւ միմեանց պատճառ լինելով. մեծատունք եւ չբաւորք, ազբառք եւ հարուստք, արք եւ կանայք, ծերք եւ տղայք վասն սիրոյն Քրիստոսի եւ Նախավկային իւրոյ սրբոյն Ստեփաննոսի եւ ի սէր այն հոգւոյ սուրբ

առնն հասարակաց լիալիք եւ առատածենն եւ արդիւնարար տուրք եւ նուէրք, ընծայք եւ ողորմութիւն չնորհէք ի ձեռն զորս, որով կարասցեն զլեռնացեալ պարտսն վճարել, զքանդեալն նորոգել եւ զկարիս միաբանիցն եւ երթ եւ եկողացն լցուցանել, նաեւ եկեղեցականաց անօթից եւ զգետուց եւս օժանդակ լինիք զմա, որով պայծառացուցեալ զարդարեացեն զսուրբ տաճարն եւ հանդերձ միաբանօք միշտ եւ հանապաղ ի տուէ եւ ի գիշերի անդադար սաղմոսերգութեամբ, պաղատմամբ եւ պատարագօք աղօթեացն վասն ձեր եւ վասն ննջեցելոց ձերոց, եւ որքան որ ի յայն սուրբ ուխտն պաշտօն պատարաղ, որ կատարի ձեզ եւ ձեր ննջեցելոցն մասն-եւ բաժին եղիցի: Եւ ըստ արոց եւ ողորմութեանցն ձերոց բաղմապատիկ եւ առաւելապատիկ ընկալիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ աստ եւ ի հանդերձեալն. ամէն: Գրեցաւ ՌՃՀԸ Թվին, Մարտի ԻԵ, ի զբան սուրբ Էջմիածնի:

ԻԳ.

Ա. ԿՈՆՏԱԿ ՅԱԿՈԲ ՇԱՄԱԽԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (1759—1763)

Յակոբ Կաթ. Շամախեցիէն աչքի. առջեւ կը դանուին երկու կոնդակ: Անոնցմէ մին նա Մուսայէլ առաջնորդին ձեռքը տալով՝ զինքը կը լիազօրէ Նախավկայի վանքին համար ժողովարարութիւն ընելու եւ ժողովուրդը կը յորդորէ առատօրէն իր նպաստն ու լուծան տալու:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵ՛

Նիւր՝ թուղթ, ողորկ, հաստ, զիմացկուն: — Մեծուր-իւն՝ 35 × 28: — Գրութիւն՝ 34 × 26: — Տոպ՝ 40: — Գիր՝ նօտր, պղտիկ ու սիրուն, առաջին երկու տողերը կարմիր թանաքով: — Զարդագիր՝ «ՅԻ» սիրուն եւ զոյնզոյն, բայց կէսէն կտրուած՝ առնուած: — Լուսանցազարդ՝ չունի աջ ու ձախ լուսանցքերուն երկերկու կարմիր գիծ: — Նկար եւ կնիք՝ չունի եւ կամ հանուած: — Հանգաւանք՝ վերի մասը կտրուած, բնագիրն ամբողջական, գործածութենէ քիչ մը մաշած՝ խոնաւութիւն տեսած: — Ծանօթութիւն՝ կոնակին վրայ գրուած՝ «Կոնդակ Յակոբ կաթուղիկոսի վասն կամաւոր ողորմութեան ի պէտս նորոգութեան վանաց Նախավկայի, ի Թվ. Հայոց ՌՄԸ, փրկչական 1759. Շամախեցի Յակոբ կաթուղիկոս»:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ՝
Յիսուսի Քրիստոսի ծառայ օր եւ Շնորհիւն Նորա Կաթուղիկոս եւ ծայրագոյն Պատրիարք Ամենայն Հայոց, նաեւ Առաքելականի Եկեղեցւոյս Քրիստոսի եւ տիեզերականի մեծի Աթոռոյս սրբոց Էջմիածնի: Որ ի Վաղարշապատ Մայրաքաղաքի: Յորմէ ժամանալ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան. Շնորհք Առաքելական եւ Աստուածային բաղմապատիկ օրհնութիւնն եւ նախախնամական գթութիւնն ի վերայ ի լուսաւորչածին եւ միաբնադաւան ազգացի Հայկազունեաց: Ուր եւ հասցէ նամակս զայս օրհնութեան մերոյ ի Մայրաքաղաքս, ի Քաղաքս եւ Գիւղաքաղաքս, ի Ղասապայս, ի Կարվանսարայս, ի Խանուքս, ի Կրպակս, եւ ի յամենայն շէնս բնակութեանց զոցին: Յորս կառուցեալ եւ հաստատեալ սրբոց եկեղեցեաց եւ եկեղեցականաց Դասուց: Նախ զլուս կարգեալ Արհի եւ պանծալի Առաջնորդաց. Շնորհազարդ եւ Աստուածարան վարդապետաց, Մեղսաբաւիչ երկնահարուէր Քահանայից, Սարսախելի խորհրդոյն ապատուոր Սարկաւազաց. Պերճապատիւ եւ փառազարդ իշխանաց. Գոյիւք զեղուն եւ ընչիւք յողնարեղուն Տօբիթաւորաց. Շքեղաչուք եւ բարեպաշտ Մեծատանց, Իրաւադատ եւ ճշմարտախօս Մէլիքներաց, Հաւատարիմ եւ հարազատ Երիցփոխանաց, Իմաստասէն եւ հանձարեղ Վաճառականաց, Գեղեցիկանկար եւ վայելչազօրձ Արուեստաւորաց, Արդարաւաստակ եւ քրանաջան Հոգազործաց, Համեստարարոց եւ երկիւղազարդ Տանտիկնաց եւ այլ առ հասարակ միահամուռ ամենայն ժողովրդականաց խմբից մեծաց եւ փոքունց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, երիտասարդաց եւ կուսից եւ ամենայն չափու հասակի տիոյ եւ կարգի ի Քրիստոս Աստուած հաւատացելոցդ. ամէն:

Շնորհք ընդ ձեզ եւ երկնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ ամենակալէ եւ Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ եւ ի սրբոց Հոգւոյն կենարարէ իջցէ եւ հանդիցէ ի վերայ ձեր, եկեացէ եւ բնակեցցի առ ձեզ իբրեւ զյորձանս գետոց եւ որպէս զվտակս աղբերաց յորդահաս ըզխամբ եւ առատապէս ծաւալմամբ. ամէն:

Այլ եւ օրհնեցէ զձեզ Տէր Աստուած մեր եւ զարդարեալ պայծառացուցէ զամենեւեանդ հոգւով եւ մարմնով, տամբ եւ տեղեօք, որդովք եւ դասերօք, զարմօք եւ զա-

աւիօք, սիրելեօք եւ բարեկամօք, ընչւեք եւ ապրանօք, վարօք եւ վաստակօք. Այդեւտանօք եւ բուրաստանօք. Առօք եւ տրօք. Շահօք եւ վաճառօք. ամէն:

Եւ ընդ Աստուածապարզեւ եւ օրհնութեան նամակաւ ծանուցումն լիցի սիրելի եւ հոգեւոր որդւոց մերոց եւ լուսածնունդ դաւակացող մօրս հաւատոյ սուրբ Էջմիածնի: Բանդի յորդորէ գհաւատացեալս Սրբազան Առաքեալն Քրիստոսի Պօղոս թէ՛ ի պէտս սրբոց հաղորդեցարուք, նոյնդունակ եւ Տէրն մերՅիսուս Քրիստոս հրամայէ՝ ի տուրս ողորմութեան. երանի տայ ողորմածացն ասելով՝ երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն եւ դարձեալ հրամայէ եթէ՛ Տուք եւ աացի ձեզ, բարեցէք եւ բացցի ձեզ: Արդ հոգեւոր որդիք մեր, զի թէպէտ ամենայն բարեգործութիւնք մարդկան ընդունելի են առաջի Աստուծոյ, բայց սակայն ողորմութիւն շնորհելն բարձր ի գլուխ պարծի ի վերայ ամենայն բարեգործութեանց մարդկան եւ ողորմութիւն տուողացն զվարձս բազմապատիկս պարգեւէ Աստուած: Բանդի տրօք ողորմութեան քաւէ Տէր Աստուած զմեզս մարդկան եւ արժանի առնէ երկնից արքայութեան եւ անթառամ պսակացն: Այլ եւ արօք ողորմութեան հանդիստ եւ արքայութիւն պարգեւէ Տէր Աստուած ննջեցելոց ամենեցուն: Եւ յայս բարեգործութիւն պարծի սուրբն Յօհան Ոսկերեւանն ասելով թէ՛ եթէ չամաչի զողորմածն՝ Աստուած ասէի, բայց ասեմ եւ ոչ ամաչեմ, վասն զի ողորմութիւն զհօր գեհնին շէջուցանէ, զանքուն որդն զժողային սպանանէ եւ զմարդն հաւասար հրեշտակաց առնէ: Եւ արդ սիրելիք մեր ի Տէր, զի թէպէտ ողորմութիւն տալն ամենայն ուրեք ընդունելի են առաջի Աստուծոյ, բայց որ սակս սրբոց եկեղեցեաց շինութեան եւ վանօրէից հաստատութեան եւ սրբոյ ուխտից պայծառութեան ընծայեն նուէրս եւ ողորմութիւնս, առաւել հաճոյ եւ ընդունելի լինին առաջի Աստուծոյ, վասն զի եկեղեցի է երկին կառուցեալ ի վերայ երկրի, գուշակեալ սանդուխն Յակոբայ, որով հրեշտակք ի յերկիր իջանեն եւ մարդիկք ի յերկինս երանեն, եկեղեցի է յորում միշտ պատարագի Քրիստոս գտան Աստուծոյ ի փրկութիւն աշխարհի եւ ի քառութիւն մեզաց մարդկան. յորոց մի ի բազմաց է վանք եւ լուսազարդ ասճար փառացն Աստուծոյ եւ հաշակաւոր վանք սրբոցն Ստեփաննոսի Նախավկային

Քրիստոսի եւ առաջին մարտիրոսին: Որ շնորհօքն Քրիստոսի կառուցեալ կայ յերկրին արեւելից ի նահանգին Նախիջևեանու եւ ի գիւղն Շամբ. նարդեանս ձեզ յայտնի է, որ սուրբ Ստեփաննոսի վանքն վաղնջուց գործով՝ տանիք եկեղեցւոյն պարխայն եւ կամ խցերն ամէն քայքայեալ են, մինչ զի վասն մեղաց մերոց այսմ ամի մեծ շարժ լեալ հարաւային (ըն. հարաֆային) կողմն պարսպին փրեալ եւ քակեալ եղեւ ի շարժից. վասն որոյ ոչ ոնելով նոցա կարողութիւն եւ ոչ յատուկ թեմս, որ շինիցեն զքակեալն, որ եւ ծանուցեալ մեզ յիրաւի աղաւաղեցաք եւ զայս օրհնութեան կոնդակս տուաք ի ձեռն մեր սիրելի եւ հոգեւոր որդի եւ նորին առաջնորդ Մուսայէլ խոհեմամիտ վարդապետին զալ եւ շրջիլ ի գրունս աստուածասէր ողորմածացդ եւ խընդրել զկամաւոր ողորմութիւնս, վասն որոյ եւ զուք սիրելիք մեր ի սէրն Քրիստոսի եւ վասն յուսոյ արքայութեան եւ ի սէր սրբոցն Ստեփաննոսի Նախավկային (եւ մանաւանդ որ թէ՛ մ եւ վիճակ ոչ ոնի) եւ ձեր ծաղկեալ որդւոց արեւուն մատաղ. եթէ ինքն զայցէ եւ կամ զմի ոք ի միաբանից իւրոց առաքեացէ առ աստուածսիրութիւն ձեր, արք եւ կանայք, ծերք եւ աղայք, աղքատք եւ հարուստք զմիմեանս յորդորելով եւ միմեանց բարեաց պատճառ լինելով առատ եւ արդիւնաւոր սուրբ եւ ողորմութիւն շնորհեցէք ի ձեռն զորս, որ տարեալ՝ շինիցեն զպարխայն սրբոցն Ստեփաննոսի վանիցն եւ կրկին պայծառացուցեալ զարդարեցեն հոգեւորական կարօք ի փառս Աստուծոյ եւ ի պարձանս ձեր եւ ամենայն աղբիս Հայոց: Որ եւ ըստ արոց եւ ողորմութեանց ձերոց միոյն բազմապատիկ ձեզ հատուցէ Քրիստոս Աստուածն մեր. նաեւ որքան պաշտօն՝ պատարազ եւ սաղմոսերգութիւնք մատչեալ կատարի(ն) ի սուրբ վանքն Ստեփաննոսի ձեզ եւ ձեր ննջեցելոցն մեծ մասն եւ բաժին եղիցի: Գրեցաւ ի ՌՄԸ (1759) Նոյեմբերի ԻԶ, ի սուրբ Էջմիածին: Հայր մեր»:

ԻԵ.

Յակոբ Շամախեցի կաթողիկոսը զարգարուն կոնդակով մը Գրեգոր վարդապետի եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կը ծանուցանէ:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ՝

Նիւք՝ Թուղթ, փայլուն, ողորկ: — Մեծուքիւն՝ 45 X 25: — Գրուքիւն՝ 26 X 16: — Տաղ՝ 27: — Գիր՝ նօտր, շատ բաւեր գլխադիր կամ կարմիր մեյլանով սկսուած, առաջին երկու տողերը կարմիր մեյլանով: — Զարդագիրք՝ «ՅԻ» զոյնդոյն բաւական լաւ: — Լուսանցազարդ՝ ամբողջական խորան մը զոյնդոյն ծաղիկներով եւ տերեւներով, սակայն ոչ այնքան ահնահաճոյ: — Նկարք՝ կաթողիկէ, ճաշակաւոր: — Կնիք՝ խոշոր, Ամենասուրբ Երրորդութեան պատկերով, շուրջը գրուած՝ «Շնորհիւն Աստուծոյ Յակոբ Կաթ. ամենայն Հայոց. ՌՄԸ»: — Հանգամանք՝ մաքուր, միայն քիչ մը աղտոտած, գործածութեան հետեւանքով: — Ծանօթութիւն՝ կոնակին վրայ գրուած մատիտով՝ «1759»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ, որ եւ Շնորհիւն նորա Կաթողիկոս եւ ծայրագոյն Պատրիարք Ամենայն Հայոց Վաղարշապատու Աստուածաէջ Աթոռոյս եւ յաջորդս սրբոց առաքելոցն Թաղէոսի եւ Բարդուղիմէոսի եւ փոխանորդս սրբոցն Գրեգորի Լուսաւորչին մերոյ: Շնորհօք Ամենազօրին Աստուծոյ բազմաթողով հանգէս արարի ի ՌԶԾԹ ամի Փրկչին եւ ի մերում թուականին ՌՄԸ եւ ի Նոյեմբերի ԻԶ յաւուրս Շաբաթ ի տօնի սրբոցն Գրեգորի Աքանջելադործի, ի յատենի լուսանկար Միածնաիջի ամենապայծառ եւ աստուածաշէն սրբոյ Աթոռոյս, ի ներկայութեան բնաւից եպիսկոպոսաց եւ ամենայն վարդապետաց եւ այլ աստիճանաւորաց սրբոյ եկեղեցւոյ եւ աշխարհականաց իշխանաց եւ աղքատաց համօրինաց, զսիրելի որդեակն մեր եւ զհարազատ գաւակն սրբոյ Աթոռոյս զՏէր Գրեգոր խոհեմամիտ վարդապետն ձեռնադրեցի եպիսկոպոս ի վերայ սրբոյ Նախավկայի Ստեփաննոսի վանիցն ըստ խնդրոյ ժողովրդեանն: Եւ այսպէս շքեղական փառօք զարդարեցի եւ առաքելական կարգիւ ճոխացուցի շնորհելով զպատուական եմիփորոնն նիւ թագ ի գլուխն եւ սրբալոյս մեռնաւ օծի զճակատն եւ զբոյթն աջոյ առ ի ձեռնադրել զբահանայս եւ զայլ աստիճանաւորս եւ յօրհնել եւ օծանել զեկեղեցի եւ զսպասան, որք ի նմա եւ ետու զմաքուր մատանին ի մատն եւ զգաւագան իշխանական ի ձեռն եւ զսուրբ աւետարանն փրկչական ի գիրգն՝ առ ի միւրի-

թարել զժողովուրդն Քրիստոսի, խրատել զթիւրեալս եւ յանգամս Քրիստոսի յօշել զղղջացեալսն: Եւ որոշել զանդեղան եւ զհերձուածօղսն ի հօտէն Քրիստոսի: Վասն որոյ ետու զայս փոքրադիր վկայականս ի ձեռն սիրելի որդւոց մերոյ Գրեգոր նորընծայ եպիսկոպոսի: Զի տեսողք զվկայական նամակս մեր, զիտասջիք որ արդարեւ ճշմարտագէտ եպիսկոպոս է, ուստի կայեալն ի դմանէ կայեալ է եւ արձակեալն արձակեալ: Արդ մի ոք իշխեսցէ հակառակիլ դմա: Այլ թէ ուր ուրեք եւ հանդիպցի սիրով մեծաւ ընդունաջիք ձեռնադրեալ եպիսկոպոսը ի մէջ, որպէս աւետարանական պաշտօնեայ Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ առ այս կատարողք հրամանաց մերոց եղիջիք օրհնեալ յԱստուծոյ եւ ի մէջ իսկ: Ամէն»:

ԻԶ.

ԿՈՆԿՍՏԱՆՍՆՈՒՆ ԵՐԵՒԱՆՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (1763—1780)

Յակոբ կաթողիկոսի յաջորդը Սիմէոն Երեւանցին կոնդակով մը Գրեգոր վարդապետին առաջնորդութիւնը վերստին կը հաստատէ: Հաւանականաբար այս կոնդակը կ'ազդարարուի «Դիւան»ի մէջ (Աղայեանց Գ. քհն. Դիւան, Գ., էջ 126—127):

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ՝

Նիւք՝ Թուղթ, բարակ: — Մեծուքիւն՝ 33 X 22: — Գրուքիւն՝ 21 X 15: — Տաղ՝ 37: — Գիր՝ նօտրադիր, պարզ ու փոքր: — Զարդագիրք՝ «ՅԻ» թռչնագիր, բաւական յաջող: — Լուսանցազարդ՝ բարակ զծեր բնաւից կը բաժնեն լուսանցքներէն: — Նկար՝ զիրը կը բաժնեն լուսանցքներէն: — կաթողիկէ մը, պարզ, բայց ճաշակաւոր: — Կնիք՝ Պատկեր ամենասուրբ Երրորդութեան, վրան գրուած՝ «Շնորհիւն Աստուծոյ Սիմէոն մանի մաքուր մնացած»: — Ծանօթութիւն՝ կոնակին վրայ մատիտով գրուած՝ «1766»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Սիմէոն կաթողիկոս եւ ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, նաեւ մեծի եւ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ եւ ողջունի օրհնութեան եւ շնորհաց ի վերայ սիրելի եւ հոգեւոր որդւոց մերոց եւ լուսա-

7 Բն. ժամանակէ:

ճնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս, սրբոյ Նախավկայի վանից ներկայ եղեալ բոլոր Միաբանիցդ, Վարդապետացդ, Արեղայիցդ եւ այլ եկեղեցական եւ արտաքրական հարազատացդ սրբոյ տանդ: Այլ եւ ի դորին բոլոր թեմս եւ վիճակս բնակեալ քահանայիցդ, իշխանացդ եւ միահամուռ ամենայն ժողովրդոցդ մեծաց եւ փոքունց ի Տէր խնդալ: Ամէն: Ծնորհք, սէր եւ խղաղութիւն Ամենասրբոյ Երրորդութեանն իջեալ հանդիցէ ի վերայ ձեր եւ ձերայնոցն եւ ընդ ձեզ բնակացի եւ լցուցէ ամենայն հոգեւոր եւ մարմնաւոր բարութեամբ. ամէն: Եւ ընդ սիրոյ եւ աստուածային օրհնութեան թղթոյս զբաւալիք սիրելի եւ հոգեծին որդիք մեր ի Տէր եւ հարազատ որդիք սրբոյ Աթոռոյս իջմիածնի: Զի զիտէք ամենեքեան զնեղութիւն ժամանակիս եւ զչքաւորութիւն վանիցն ձերոց, որ կայ միշտ ի մէջ մեծի նեղութեան եւ աստուպանաց, մինչ զի առաջնորդ դորին ոչ կամի եւ կարէ յայդր նստիլ: Այդ ահա ի սէր սրբոյ Նախավկայի մեծադօր վանիցն ձերոց զվաղեմի միաբան եւ զբաղմաշխատ որդին դորին զԳրիգոր վարդապետ առաջնորդ արարեալ յղեցաք յայդր. նախ պատուիրեմ բոլոր միաբանիցդ սրբոյ Նախավկային պարտիք որդիական հնազանդութեամբ եւ թարց հակառակութեան հլու եւ հնազանդ լինիլ յողնաշխատ առաջնորդիդ ձերոյ Գրիգոր խոհեմադարդ եւ աստուածարան վարդապետիդ եւ զհոգեւոր հրամանս դորին զյլսովին կատարել եւ զօգուան սրբոց վանիցն ձերոց ջանալ եւ առնել զգուշութեամբ մեծաւ: Այլ եւ ձեզ ամենայն թեմի եւ վիճակի եղեալ քահանայից, իշխանաց եւ ժողով(ո)րդոցդ հարկիւ պատուիրեմ՝ պարտիք դուք ամենեքեան առանց նախանձու եւ հակառակութեան հլու հնազանդ եւ հպատակ լինել Առաջնորդիդ ձերոյ Գրիգոր խոհեմամիտ վարդապետիդ եւ զամենայն զհոգեւոր հրամանս դորա կատարել եւ զառաջին խոռովութիւնսն եւ զատելութիւնսն ի միջոյ բառնալ եւ զմիմեանս սիրել եւ պատուել եւ յամենայն զօրութենէ եւ կարողութենէ ձերմէ ջանալ եւ զսուրբ վանքն որ է տուն հոգւոյ ձերոց շէն եւ պայծառ պահել ի պարծանս ձեր եւ ըստ սովորութեան ձերում զամենայն հասս եւ զիրաւունս, եթէ վանական եւ եթէ առաջնորդական, տալ զմալ ի եւ անթերի եւ առանց պակասութեան եւ

տրանջանաց՝ ի շինութիւն եւ ի պայծառութիւն սրբոյ վանիցն ձերոց, մի դուցէ եթէ ի միաբանիցդ եւ եթէ ի ժողովրդոցդ ոք ներհակ եւ հակառակ երեւելի դմա եւ հրամանաց մերոց, զի այնպիսիքն զդոյշ լինելին, զի մի զպատիժս կրեցեն ի մէնջ եւ կատարողքդ հրամանաց մերոց եղելիք օրհնեալք յԱստուծոյ եւ ի մէնջ. ամէն: Գրեցաւ ի ՌՄԺՅ (1766) թուին Դեկտեմբերի ԻԷԼին եւ ի լուսանկար աթոռս սուրբ Էջմիածին⁸:

ԻԷ.

ԿՈՆՏԱՆԿՆԵՐ ԳՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ,
(1780—1799)

Սլովէոն Երեւանցիին յաջորդն է կաթողիկոսական աթոռին վրայ Դուկաս Կարնեցին, որ 1780ին Նախիջևեանի ժողովրդեան կոնդակով մը իր նախորդին մահը կը գուժէ եւ իր հայրապետական ընտրութիւնն ու օծումը կը ծանուցանէ: Նա միեւնոյն թուականին եւ միեւնոյն բովանդակութեամբ յատուկ կոնդակ մըն ալ կը գրէ՝ «առ սուրբ Նախավկայի առաջնորդ Գրիգոր վարդապետն» (Սմբատեան, Երնջակ, էջ 458):

Երկու տարի վերջը Դուկաս կաթողիկոսն ուրիշ կոնդակ մը կը գրէ «առ Նախավկայի վանից ձերունի Գրիգոր վարդապետն» (անդ, էջ 461): Բովանդակութիւնը՝ Բարսեղ վարդապետի նուիրակութեան մասին:

Ապա 1790ին Դուկաս կը գրէ կոնդակ մը՝ «առ Շամբեցիս վասն խնդրոյ նոցա կարգելոյ զվանահայր Նախավկայի վանից զՄաղաքիա վարդապետն» (անդ, էջ 462):

Այս կոնդակներու Նկարագրութիւնն՝ անձանօթ, իսկ Բովանդակութիւնն՝ այնքան զխանք, որքան վերը յիշուեցաւ:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

Verlag: Mechitharisten-Kongregation. — Für den Inhalt verantwortlich P. Mesrop Habozian. —
 Druck: Mechitharisten-Druckerei, Alle Wien 62, Mechitharistengasse 4.

